Խոսքի ազատությունը կամ կարծիք արտահայտելու ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է և ամրագրված է բազմաթիվ միջազգային փաստաթղթերում: Արտահայտվելու ազատությունը ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով¹, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով² ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով³: Այս միջազգային ակտերը հիմք են դառնում խոսքի ազատության իրավունքի հետագա զարգացման համար և նախանշում նրա զարգացման ուղղությունները: Խոսքի ազատության իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ անկախ սահմաններից և պետական մարմինների միջամտությունից:

Այսօր խոսքի ազատության ամենատարածված խնդիրը այսպես կոչված մուտացիան է, այսինքն՝ երբ մարդիկ, օգտվելով իրենց իրավունքներից, մասնավորապես խոսքի ազատության իրավունքից, անցնում են թույլատրելի սահմանը և իրենց իրավունքները ոչ բարեխղճորեն են իրացնում՝ խախտելով այլոց իրավունքները: Այս իրավիճակը կոչվում է անձի իրավունքների սահմանանցում և չարաշահում: Իրավունքի չարաշահում կարող է արձանագրվել միայն այն դեպքում, երբ մարդն իր իրավունքներն իրացնելիս դուրս է գալիս իրեն օրենքով վերապահված իրավասությունների շրջանակից և խախտելով այլոց իրավունքները և վնաս հասցնելով նրանց օրինական շահերին:

Խոսքի ազատության իրավունքի իրացման ընթացքում թույլատրելի սահմանն անցելիս՝ իրավունքը չարաշահելիս, ի հայտ է գալիս ատելության խոսքը (*hate speech*):

¹Շնդունել է Եվրոպայի խորհուրդը 1950 թ. նոյեմբերի 4-ին:

²Շնդունել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովը 1948 թ. դեկտեմբերի 10-ին, 217 Ա. III:

³Շնդունել է ՄԱԿ-ը 1996 թ. դեկտեմբերի 16-ին, 2200 Ա. XXI:

Freedom of speech or freedom of expression is one of the fundamental human rights and is enshrined in many international documents. Freedom of expression is enshrined in the Convention on the Protection of Human Rights and Fundamental Freedoms¹, the Universal Declaration of Human Rights² and the International Covenant on Civil and Political Rights³. These international acts were the basis for the further development of the right to freedom of speech and predefined the directions of its development. This right includes the freedom to hold opinions, receive and impart information and ideas without interference from state authorities and regardless of boundaries.

Currently, the most common problem is the so-called mutation of freedom of speech, that is, when people using their rights, in particular the right to freedom of speech, cross the permissible boundaries and exercise their rights in bad faith, causing damage to the rights of other people. This situation is called violation and abuse of personal rights. Abuse of a right can be recorded only when a person, while exercising his/her rights, goes beyond the scope of powers reserved to him by law and damages the rights and legal interests of other persons. Hence, during the exercise of the right to freedom of speech, when the permissible boundaries are exceeded, when the right is abused, appears the speech of hate or as the whole world calls it, "hate speech".

¹ Adopted by the Council of Europe on November 4, 1950.

² Adopted by the UN General Assembly on December 10, in 1948. 217 A III.

³ Adopted by the United Nations on December 16, 1996. 2200 A XXI.

Ատելության խոսքի դեմ պայքար պաշտոնապես հայտարարող փաստաթուղթ կարելի է համարել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Ատելության խոսքի վերաբերյալ 1997թ. հանձնարարականը⁴, իսկ այսօր արդեն ատելության խոսքի տարածումը դարձել է շատ լուր մարտահրավեր ամբողջ աշխարհի համար այնքանով, որ նույնիսկ ՄԱԿ-ն ան-մասն չիմնացել այդ խնդրի դեմ պայքարին՝ ընդունելով Ատելության խոսքի վերաբերյալ գործողությունների ծրագիրը⁵ :

ՄԱԿ-ի՝ Ատելության խոսքի ռազմավարության և գործողությունների ծրագրի համաձայն՝ ատելության խոսք է համարվում «ցանկացած բանավոր հաղորդակցություն, գրավոր խոսք կամ վարքագիծ, որ ոտնձգություն կամ նվաստացուցիչ կամ խտրական լեզու է կիրառում՝ ուղղված անձին կամ խմբին՝ պայմանավորված նրանց ովնության, այլ կերպ ասած՝ նրանց կրոնական, էթնիկական, ազգային, ռասայական պատկանելությամբ, մաշկի գույնով, ծագմամբ, սեռով կամ ինքնության այլ գործոններով»:

Ատելության խոսքի տարածումն այսօր դարձել է համաշխարհային խնդիր, այդ իսկ պատճառով պետությունները և միջազգային կազմակերպությունները սկսել են ակտիվ պայքար մղել դրա դեմ: Պայքարը տարվում է ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական գործիքակազմով՝ նախատեսելով օրենսդրական սահմանափակումներ՝ ընդհուպ մինչև քրեական պատասխանատվություն:

Ատելության խոսքը չի շրջանցել նաև ՀՀ հասարակական հարաբեր-րություններ է ներմուծվել և արմատավորվել ատելության խոսքն իր բազմաթիվ դրսևորումներով՝ վիրավորանք, զրպարտություն, բռնության կոչեր են:

⁴Տե՛ս <https://rm.coe.int/1680505d5b>:

⁵Տե՛ս UN Strategy and Plan of Action on Hate Speech 18 June SYNOPSIS.pdf:

The 1997 Recommendation⁴ on Hate Speech of the Committee of Ministers of the Council of Europe can be considered a document officially declaring the fight against hate speech, and now the spread of hate speech has become a very serious problem for the whole world. So much so that even the United Nations was not left out of it and also got involved in the fight against hate speech by establishing the United Nations Action Plan on Hate Speech⁵.

According to the United Nations Hate Speech Strategy and Action Plan, hate speech is “any kind of communication in speech, writing or behavior, that attacks or uses pejorative or discriminatory language with reference to a person or a group on the basis of who they are, in other words, based on their religion, ethnicity, nationality, race, color, descent, gender or other identity factor.”

The spread of hate speech has become a global problem, which is why states and international organizations have begun to actively fight against the spread of hate speech. The struggle is waged with both political and legal instruments, providing legislative restrictions, up to criminal liability.

The Republic of Armenia was also not spared from the spread of hate speech. Hate speech with its many expressions - insult, slander, calls for violence, etc. - has been introduced and rooted in public relations. All these are serious threats to the security and solidarity of the society and the fight against them is currently on the agenda.

⁴See <https://rm.coe.int/1680505d5b>:

⁵See UN Strategy and Plan of Action on Hate Speech 18 June SYNOPSIS.pdf:

Այս ամենը հասարակության անվտանգության և համերաշխության համար լուրջ սպառնալիքներ են, և դրանց դեմ պայքարն օրակարգային է: Համաշխարհային և սոցիալական հարաբերությունները զարգանում են ամեն օր, և նոր միջոցներ ու գործիքներ են կիրառվում հայաստանյան հանրային վարքագիծը կառավարելու նպատակով, իսկ ատելության խոսքն օգտագործվում է խոսքի ազատությունը սահմանափակելու համար: Մինչդեռ կարծիքների բեռնացումը, մարդկանց բաժանումը սևերի և սպիտակների, կողմնակիցների և հակառակորդների (որտեղ անհատը խուսափում է բարձրաձայնել իր տարբերվող կարծիքը՝ վստահ լինելով, որ կդառնա ատելության խոսքի թիրախ), հանգեցնում են այլընտրանքային կարծիքի լռեցմանը և հանրային կարծիքի ու պահանջների ձևավորումը վերահսկելուն:

Խոսքի ազատությունը կոչված է ճշմարտությունը բացահայտելուն՝ քաղաքակիրթ քննարկումների միջոցով, և այն չպետք է օգտագործվի խտրականությունն ու անկարգությունն արդարացնելու համար. այն կարող է հանգեցնել հանցագործությունների և քառսի հաստատմանը երկրում: Ստեղծված իրավիճակից ելք գտնելու համար նախ անհրաժեշտ է ատելության խոսքը հստակ ձևակերպել որպես ժողովրդավարության մարտահրավեր, հստակ սահմանել դա ներպետական օրենսդրության մեջ և միջազգային կարգավորումներում, յուրաքանչյուր անձի համար հստակ դարձնել խոսքի ազատության և ատելության խոսքի սահմանագիծը:

Ատելության խոսքին վերաբերող խնդիրները հնարավոր չէ արագ լուծել, միննույն ժամանակ, շատ կարևոր է հիշել, որ դա այլևս ներպետական խնդիր չէ. այն դարձել է համընդհանուր մարտահրավեր: Հարկավոր է կրթել հասարակությանը, քաղաքական գործիչներին, ՋԼՄ ներկայացուցիչներին, որդեգրել պատշաճ քաղաքականություն, մշակել օրենսդրություն և առաջնորդվել

Global and social relations are evolving every day, and new means and tools are being used to control public behavior in Armenia, and hate speech is being used to limit freedom of speech. Meanwhile, the polarization of opinions, the division of people into black and white, supporters and opponents, where the individual avoids voicing his differing opinion, being sure that he will become a target of hate speech as a result, leads to the silencing of alternative opinion, the management of the formation of public opinion and demands.

Freedom of speech is meant to reveal the truth through civilized discussion and should not be used as an umbrella to justify discrimination and disorder, which can lead to crimes and chaos in the country. In order to find a way out of the emerged situation, it is first necessary to clearly formulate hate speech as a challenge for democracy, to clearly define it in domestic legislation and international regulations, to clarify the boundary that makes it clear for every person where the borderline between freedom of speech and hate speech is. It is not possible to solve the problems related to hate speech quickly, but it is very important to remember that it is no longer a domestic or individual problem of our country. It has become a universal challenge. It is necessary to educate the public, politicians, media representatives, adopt proper policies and legislation and be guided by a simple formula: my rights end where the rights of others begin.

պարզագույն բանաձևով իմ իրավունքներն ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են դիմացինի իրավունքները:

«Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը նախաձեռնել է քանակական (հանրային կարծիքի) և որակական (ոլորտի շահառուների և մասնագետների հետ խորքային հարցազրույցներ և ֆոկլորսխմբային քննարկումներ) հետազոտություն, որպեսզի վեր հանվեն հայաստանյան հասարակության պատկերացումներն ատելության խոսքի, նրա դրսևավորումների և հետևանքների վերաբերյալ, ինչպես նաև հավաքագրվեն մասնագիտական լուծումներ և մեկնաբանություններ հասարակական տեսակետների և ձևավորված կարծրատիպերի վերաբերյալ:

Քանակական տվյալների վերլուծությունն անհրաժեշտ է, որպեսզի հստակ պատկեր ստացվի այն մասին, թե ինչպես է հասարակությունն ընկալում ատելության խոսքն ու նրա դրսևորումները ո՞ր հարթակներում է առավելապես նկատվում ատելության խոսքը, արդյոք ատելության խոսքի տարածումը դիտարկո՞ւմ է որպես խնդիր, և ինչո՞վ է պայմանաված նրա այսչափ տարածվածությունը:

Որակական տվյալների ամփոփման միջոցով ստացված փաստերը պետք է դրվեն օրենսդրական բարեփոխումների, ինչպես նաև պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկությունների հիմքում՝ ապահովելով փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակում, որտեղ արտահայտված կլինեն ոլորտի բոլոր շահառուների կարիքները, մտահոգություններն ու առաջարկությունները:

Հետազոտությունն իրականացվում է «Ատելության խոսքի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության և հանդուրժողականության հաստատման» ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետությունում

The “Institute of Liberal Politics” NGO has initiated the implementation of quantitative (public opinion) and qualitative (in-depth interviews and focus group discussions with stakeholders and experts in the field) research in order to highlight the understanding of hate speech by the Armenian society, its manifestations and consequences, as well as to compile professional solutions and comments about public views and formed stereotypes.

Quantitative data analysis is necessary in order to get a clear picture of how society perceives hate speech and its manifestations, on which platforms hate speech is mostly observed, does it consider the spread of hate speech as a problem, and what is the reason for its prevalence.

Findings from qualitative data summaries should inform recommendations for legislative reform and practice improvement, ensuring evidence-based policy development that reflects the needs, concerns and recommendations of all stakeholders in the sector.

The research is carried out within the framework of the “Combating hate speech for the sake of pluralism and tolerance in a democratic society” project, which is funded by the support of the Embassy of the Kingdom of the Netherlands in the Republic of Armenia.

Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ:

Լիբերալ քաղաքականության ինստիտուտը հիմնադրվել է 2018թ. և հիմնադրումից ի վեր իրականացրել է ժողովրդավարության և օրենքի գերակայության ամրապնդմանն ուղղված մի շարք ծրագրեր:

Ինստիտուտն ուղեղային անկախ կենտրոն է, որը ոչ ֆորմալ կրթական ծրագրեր է իրականացնում երիտասարդների համար, որոնք հետաքրքրված են քաղաքականությամբ, լիբերալիզմով և մարդու իրավունքներով:

Ինստիտուտը զբաղվում է նաև հետազոտությունների իրականացմամբ, ինչպես նաև տարբեր խմբերի, պետական կառույցների, խոցելի խմբերի և այլ անձանց խնդիրներին ուղղված փորձագիտական աշխատությունների ներկայացմամբ:

The Institute of Liberal Politics was founded in 2018 and since its establishment it has implemented a number of programs aimed at strengthening democracy and the rule of law.

The Institute is an independent think tank that provides non-formal educational programs for young people interested in liberalism, human rights and politics.

The Institute is also engaged in conducting research, as well as presenting expert works aimed at the problems of various groups, state structures, vulnerable groups and other people.

Հետազոտության խնդիրներն են.

- Նկարագրել սոցիալական տարբեր խմբերի պատկերացումներն աստելության խոսքի վերաբերյալ:
- Ուսումնասիրել աստելության խոսքին բախվելու՝ հարցվածների փորձը:
- Բացահայտել ՀՀ-ում աստելության խոսք տարածող հիմնական հարթակները:
- Պարզել ՀՀ բնակիչների վերաբերմունքը աստելության խոսք տարածող հարթակների նկատմամբ:
- Պարզել, թե աստելության խոսքն ինչ ազդեցություն է ունեցել հարցվածների և թիրախային այլ խմբերի վրա
- Պարզել աստելության խոսքը սպառելու հիմնական դրդապատճառները:
- Նկարագրել աստելության խոսք տարածող տարբեր հարթակներից և տարբեր բնույթի տեղեկություններից օգտվող քաղաքացիների սոցիալ-ժողովրդագրական դիմանկարը՝
 - o ըստ սեռի,
 - o ըստ տարիքի,
 - o ըստ կրթության,
 - o ըստ բարեկեցության մակարդակի,
 - o ըստ բնակության վայրի:
- Հետազոտել տեղեկատվական հարթակների և կարծիք ձևավորող անհատների հնչեցրած աստելության խոսքի և վիրավորանքների վերաբերյալ բնակչության տարբեր խմբերի կարծիքը:
- Վեր հանել, թե հիմնականում ինչ թեմաների, երևույթների, խմբերի և անձանց է վերաբերում տեղեկատվական հարթակների և կարծիք ձևավորող անհատների հնչեցրած աստելության խոսքը:
- Պարզել՝ որ մեթոդներն են ՀՀ բնակիչների տեսանկյունից նախընտրելի աստելության խոսքի դեմ պայքարելու համար, և որ կառույցներն ու խմբերն են պատասխանատու դրա համար:

The goals of the research are as follows:

- Describe the perceptions of "hate speech" by different social groups.
- Reveal the respondents' experience of facing "hate speech".
- Identify the main platforms spreading "hate speech" in RA.
- Identify the attitude of RA residents towards platforms spreading "hate speech".
- Identify the impact of "hate speech" on respondents and other target audiences.
- Uncover the main motivations for consuming "hate speech".
- Describe the socio-demographic profile of citizens who use different platforms and different types of information spreading "hate speech":
 - o by gender,
 - o by age,
 - o by education,
 - o by the level of well-being,
 - o by the place of residence.
- To research the attitude and opinion of different groups of the population towards "hate speech" and insults voiced by individual information platforms and opinion leaders.
- To highlight what topics, phenomena, groups and persons are mainly addressed by the "hate speech" voiced by individual information platforms and opinion leaders.
- To find out which methods are acceptable/preferred from the point of view of RA residents for the fight against "hate speech" and which structures and groups are responsible for it.

Ուսումնասիրության շրջանակներում առաջադրված նպատակին ու խնդիրներին համապատասխան՝ ընտրվել է հեռախոսային հարցման մեթոդը (CATI), որը հնարավորություն տվեց սեղմ ժամկետում անհրաժեշտ տվյալներ հավաքագրել ՀՀ տարբեր մարզերում և Երևանում բնակվող սոցիալական տարբեր խմբերի կարծիքների վերաբերյալ: Հարցաթերթը բաղկացած էր 11 հիմնական հարցերից (*տե՛ս Հավելված 1.*), որոնցից երեքը հարցվածներին պատասխանները մեկնաբանելու հնարավորություն էր տալիս՝ ավելի համապարփակ պատկեր ստանալու նպատակով:

Հեռախոսային հարցման ընտրանքը

Հեռախոսային հարցումն արվել է ՀՀ չափահաս բնակիչների շրջանում: Հարցվածների ընտրությունը կատարվել է համակցված շերտավորված ընտրանքի մեթոդաբանությամբ: Ընտրանքի հասկանիշ են դարձել:

Աղյուսակ 1. Հարցվածների բաշխվածությունն ըստ Երևանի վարչական շրջանների

Վարչական շրջան	Հարցվածների քանակ	Հարցվածների տոկոս
Նոր Նորք	49	12,3%
Աջափնյակ	41	10,3%
Ավան	20	5,0%
Արաբկիր	42	10,5%
Դավիթաշեն	16	4,0%
Էրեբունի և Նուբարաշեն	52	13,0%
Կենտրոն և Նորք-Մարաշ	50	12,5%
Մալաթիա-Սեբաստիա	51	12,8%
Շենգավիթ	52	13,0%
Քանաքեռ-Զեյթուն	27	6,8%
Ընդամենը	400	100,0%

In accordance with the goals and objectives set within the framework of the research, the method of telephone survey (CATI) was chosen, which made it possible to collect the necessary data in a short period of time regarding the opinions of different social groups living in different regions of the Republic of Armenia and Yerevan. The questionnaire consisted of 11 main questions (See Appendix 1.), 3 of which allowed the respondents to interpret their answers in order to get a more comprehensive picture.

Telephone Survey Sampling

The telephone survey was conducted with the adult residents of RA. The selection of the respondents was carried out using the combined stratified sampling methodology. The selection was characterized by:

Table 1. The distribution of respondents according to the administrative districts of Yerevan.

Administrative District	Number of Respondents	Percentage of Respondents
Nor Nork	49	12.3%
Ajapnyak	41	10.3%
Avan	20	5.0%
Arabkir	42	10.5%
Davitashen	16	4.0%
Erebuni and Nubarashen	52	13.0%
Kentron and Nork-Marash	50	12.5%
Malatia-Sebastia	51	12.8%
Shengavit	52	13.0%
Kanaker-Zeytun	27	6.8%
Total	400	100.0%

Երևան քաղաքի վարչական շրջանները (*տե՛ս Աղյուսակ 1.*),

- ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերը. յուրաքանչյուր մարզում՝ մեկ քաղաքային (մարզկենտրոն) և երկու գյուղական համայնքներ կամ երկու քաղաք և մեկ մեծ գյուղ՝ համարժեք փոխարինման հնարավորությամբ,
- ՀՀ բնակիչների համաչափ քվոտային ընտրանքն ըստ սեռի և տարիքային հինգ խմբի (18-29, 30-39, 40-49, 50-59, 60 և ավելի տարեկան):

Ընտրանքային համախմբության ծավալը կազմել է 1.060 հարցված, որից 400-ը (37,7%) Երևանի բնակիչ է, 660-ը (62,7%) մարզերի (*տե՛ս Աղյուսակ 2.*): Մարզերի բնակիչներից 492-ը (74,5%) մարզկենտրոնների բնակիչ է, 168-ը (25,5%)՝ գյուղական բնակավայրերի (*տե՛ս Հավելված 2.*):

Աղյուսակ 2. Հարցվածների բաշխվածությունն ըստ Երևանի և մարզերի

Բնակավայր	Քանակ	Տոկոս
Երևան	400	37.7%
Արագածոտն	44	4.2%
Արարատ	77	7.3%
Արմավիր	99	9.3%
Գեղարքունիք	77	7.3%
Լոռի	66	6.2%
Կոտայք	66	6.2%
Շիրակ	99	9.3%
Սյունիք	55	5.2%
Վայոց Ձոր	33	3.1%
Տավուշ	44	4.2%
Ընդամենը	1060	100.0%

Administrative districts of Yerevan city (See Table 1.),

- Urban and rural settlements of RA regions (marzes). In each marz, 1 urban (regional center) and 2 rural communities or 2 cities and 1 large village with the possibility of equivalent replacement,

Proportional quota sample of RA residents by gender and 5 age groups (18-29, 30-39, 40-49, 50-59, 60 and older).

The size of the sample pool was 1060 respondents, of which 400 (37.7%) are residents of Yerevan, 660 (62.7%) are residents of marzes (*See Table 2.*). 492 (74.5%) of the residents of marzes are residents of regional centers, 168 (25.5%) are residents of rural areas (*See Appendix 2.*).

Table 2. The distribution of respondents according to Yerevan and marzes.

Residence	Qty	Percentage
Yerevan	400	37.7%
Aragatsotn	44	4.2%
Ararat	77	7.3%
Armavir	99	9.3%
Gegharkunik	77	7.3%
Lori	66	6.2%
Kotayk	66	6.2%
Shirak	99	9.3%
Syunik	55	5.2%
Vayots Dzor	33	3.1%
Tavush	44	4.2%
Total	1060	100.0%

1.060 վավեր հարցաթերթիկ լրացնելու համար 14.813 զանգ է տրվել. պատասխանները կազմել են 7,2%: Մնացած 13.753 (92,8%) զանգերի դեպքում հարցում չի արվել հետևյալ պատճառներով. ա) հարցմանը մասնակցելուց հրաժարվել է 9.854 հոգի (66,5%), բ) ընտրված հեռախոսահամարը գոյություն չի ունեցել 2.308 զանգի դեպքում (15,5%), գ) 1.312 զանգի ժամանակ (8,9%) քվտային համապատասխան հարցված չի եղել, դ) ևս 279 հեռախոսահամար (1,9%) չի պատասխանել օրվա տարբեր ժամերի տրված զանգերին:

Հետազոտության արդյունքների վստահելիության միջակայքը՝ 95%:

Ընտրանքի սահմանային սխալը՝ $\pm 3\%$:

Տվյալների վերլուծությունը կատարվել է SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, հաշվարկվել են հաճախականություններ, փոխկապվածություններ, կատարվել է խաչաձև ու գործոնային վերլուծություն:

Հարցվածների վերաբերյալ տվյալները

Հետազոտության ընթացքում հարցվել է 1.060 հոգի՝ 45,3%-ը՝ արական սեռի ներկայացուցիչ, իսկ 54,7%-ը՝ իգական: Տարիքային խմբերը համաչափ ներկայացված են ընտրանքի մեջ (*տե՛ս Աղյուսակ 3*): Հարցվածների 40,6%-ը բարձրագույն կրթություն ունի, 32,6%-ը՝ միջին մասնագիտական, 26,8%-ը՝ միջնակարգ:

Աղյուսակ 3. Հարցվածների բաշխումն ըստ տարիքային խմբերի

Հարցվածի տարիքը	Տոկոս
18-29 տարեկան	23,1%
30-39 տարեկան	21,7%
40-49 տարեկան	15,2%
50-59 տարեկան	19,8%
60 տարեկան և բարձր	20,2%
Ընդամենը	100,0%

14813 calls were made to fill out 1060 valid questionnaires. The response rate was 7.2%. In the case of the remaining 13753 (92.8%) calls, no survey was conducted for the following reasons: a) 9,854 people (66.5%) refused to participate in the survey, b) the selected phone number did not exist in 2,308 cases (15.5%), c) in 1,312 cases (8.9%) there was no respondent corresponding to the quota, d) calls to 279 phone numbers (1.9%) were not answered at different hours of the day.

Confidence interval of research results: 95%.

Marginal sampling error: $\pm 3\%$.

Data analysis was performed using SPSS statistical software package, frequencies, correlations were calculated, cross and factor analysis was performed.

Data on Respondents

During the research, 1060 people were surveyed, of which 45.3% were male and 54.7% were female. Age groups are proportionally represented in the sample (*See Table 3*). 40.6% of the respondents have a higher education, 32.6% have a secondary education, and 26.8% have a secondary education.

Table 3. Distribution of respondents by age groups.

Respondent Age	Percentage
18-29	23.1%
30-39	21.7%
40-49	15.2%
50-59	19.8%
60 and above	20.2%
Total	100.0%

Հարցվածների 39,1%-ը չի աշխատում, մնացած 60,9%-ն ունի որոշակի զբաղվածություն (տե՛ս Աղյուսակ 4.):

Աղյուսակ 4. Ի՞նչ եք աշխատում

Զբաղվածություն	Տոկոս
Պետական կառավարման մարմնի աշխատակից	3,7%
Պետական կազմակերպության աշխատակից	17,8%
Մասնավոր կազմակերպության աշխատակից	57,6%
Ձեռնարկատեր, անհատ ձեռներեց	14,9%
Միջազգային կամ տեղական ՀԿ-ի աշխատակից	2,9%
Գյուղատնտեսությամբ զբաղվող	1,7%
Արտագնա աշխատող	1,4%
Ընդամենը	100,0%

Հետազոտության տվյալների համաձայն՝ մեկ շնչի հաշվով ամսական միջին եկամուտը կազմում է շուրջ 50.052 ՀՀ դրամ, իսկ ծախսը՝ 56.202 ՀՀ դրամ: Ծախսը գերազանցում է եկամուտները, ինչը վկայում է եկամտի անբավարար լինելու, պարտքով ապրելու և չգրանցած եկամուտների առկայության մասին: Էական տարբերություն է նկատվում Երևանի և ՀՀ այլ բնակավայրերի միջև. Երևանում մեկ անձի հաշվով ամսական թե՛ եկամուտը և թե՛ ծախսն ամենաբարձրն են, իսկ այլ քաղաքներում՝ ամենացածրը: Միևնույն ժամանակ, Երևանում ծախսերն աննշան են գերազանցում եկամուտները՝ ի տարբերություն այլ քաղաքների և գյուղերի (տե՛ս Գծապատկեր 1.):

39.1% of respondents do not work, the remaining 60.9% are employed in various fields (See Table 4.).

Table 4. Where do you work?

Employment	Percentage
Bodies of Public Administration	3.7%
State Organization	17.8%
Private Organization	57.6%
Entrepreneur, Sole Proprietor	14.9%
International or local NGO	2.9%
Agriculture	1.7%
Working Abroad	1.4%
Total	100.0%

According to the research data, the average monthly income per capita is about 50,052 AMD, and the expenditure is 56,202 AMD. Expenditure exceeds income, which indicates insufficient income, living in debt and unrecorded income. There is a significant difference between Yerevan and other RA settlements. Both income and expenditure per person per month are the highest in Yerevan, and the lowest in other cities. At the same time, expenses in Yerevan slightly exceed incomes, unlike other cities and villages (See Chart 1.).

Գծապատկեր 1. Հարցվածների ամսական եկամուտները և ծախսերը մեկ անձի հաշվով





Chart 1. Respondents' monthly income and expenditure per person.





Հարցվածների 34,3%-ը նշել է, որ վերջին հինգ տարվա ընթացքում ընտանիքի ֆինանսական վիճակը չի փոխվել, 19,2%-ը՝ որ որոշ չափով լավացել է, 1,4%-ը՝ որ կտրուկ լավացել է, 17,7%-ը՝ որ որոշ չափով վատացել է, 17,6%-ը՝ որ կտրուկ վատացել է (տե՛ս Գծապատկեր 2):

34.3% of the respondents stated that the financial situation of their families has not changed over the past five years, 19.2% stated that it has somewhat improved, 1.4% has improved significantly, for 17.7% it has somewhat worsened, and for 17.6% it has significantly worsened (See Chart 2).

Գծապատկեր 2. Ինչպե՞ս է փոխվել Ձեր ընտանիքի ֆինանսական վիճակը վերջին 5 տարվա ընթացքում

Chart 2. Tell me, please, how has your family's financial situation changed over the past 5 years?



«Ատելության խոսք» հասկացության վերաբերյալ ՀՀ բնակիչների պատկերացումները

Ատելության խոսքի վերաբերյալ ՀՀ բնակիչների պատկերացումները պարզելու համար հարցվածներին խնդրել էինք մի քանի բառով նկարագրել «ատելության խոսք» հասկացությունը: Ի սկզբանե հարցվածներին որևէ պարզաբանում չէր տրվել և պատասխանի տարբերակներ չէին առաջարկվել: Այս բաց հարցի պատասխանները բաշխվեցին հետևյալ կերպ՝ հարցվածների 37,7%-ի հնչեցրած պատասխանները պարունակում էին սահմանման մեջ առկա որոշակի տարրեր/առանձին հատվածներ/արտահայտություններ. «Հանրային խոսքի դրսևորում, որն արտահայտում է ատելություն, խտրականություն և խրախուսում է բռնություն անձի կամ անձանց խմբի դեմ»: 24,2%-ն ատելության խոսքն ընկալում է որպես բացասական էներգիայի արտամղում, 8,5%-ը՝ սուտ տեղեկությունների տարածում, 4%-ը՝ վերջին տարիների իրադարձությունների հետևանք: 3%-ն ատելության խոսքը կապում է Նիկոլ Փաշինյանի անվան հետ. հարցվածների այս խումբն ատելության խոսքի մասին խոսելիս «Նիկոլ» անունն է տվել առանց որևէ մեկնաբանության: Հարկ է նշել, որ այս պատասխանն առավել հաճախ տվել են երևանցիները (7,8%)՝ ի տարբերություն ՀՀ այլ քաղաքների (0,5%) և գյուղերի (1,4%) բնակիչների: Մնացած պատասխաններն ավելի հազվադեպ են կրկնվել: Պատասխանների նման բաշխումը վկայում է ՀՀ բնակիչների՝ «ատելության խոսք» հասկացության էության վերաբերյալ իրազեկվածության որոշակի մակարդակի մասին. հասկացությունը դժվարացել է նկարագրել հարցվածների միայն 9,8%-ը (*տե՛ս Աղյուսակ 5*):

The Perceptions of RA residents regarding “hate speech”

In order to reveal the perception of RA residents about hate speech, we asked the respondents to describe the concept of "hate speech" in a few words. Initially, the respondents were not given any explanation and no answer options were offered. The answers to this open-ended question were distributed as follows: in 37.7% of cases, the respondents' answers contained certain elements, parts and phrases that are present in the definition: "An expression of discriminatory attitude, public speech that expresses hate or encourages violence towards a person or group." In 24.2% of cases, "hate speech" is perceived as the expulsion of negative energy, 8.5% - the spread of false information, 4% - as a result of the events of recent years, in 3% of cases "hate speech" is associated with the name of Nikol Pashinyan - this group of respondents mentioned the name "Nikol" without any further comments, while talking about "hate speech". It should be noted that the residents of Yerevan (7.8%) voiced this answer significantly more often, compared to other cities (0.5%) and villages (1.4%) of RA. The other answer options were heard less frequently. Such a distribution of answers indicates a certain level of awareness of the concept of "hate speech" among RA residents. Only 9.8% of respondents found it difficult to describe the concept of "hate speech" (*See Table 5*.)

Աղյուսակ 5. Ի՞նչ է, ըստ Ձեզ, ատելության խոսքը, փորձեք մի քանի բառով նկարագրել հասկացությունը

Պատասխան	Տոկոս
«Հանրային խոսքի դրսևորում, որն արտահայտում է ատելություն, խտրականություն և խրախուսում է բռնություն անձի կամ անձանց խմբի դեմ» սահմանմանը մոտ պատասխաններ	37,7%
«Բացասական էներգիայի արտամղում՝ չարություն, նախանձ, զայրույթ»	24,2%
«Սուտ տեղեկությունների տարածում»	8,5%
«Վերջին տարիների իրադարձությունների հետևանք»	4,0%
«Նիկոլ Փաշինյան»	3,5%
«Աղբբեջանցիների հանդեպ մեր զգացմունքները»	2,3%
«Տգիտության դրսևորում»	2,1%
«Ինքնավստահության պակաս ունեցող մարդու վարք»	2,1%
«Ժամանակակից աշխարհի կառավարման գործիք և չարիք»	2,1%
«Աղքատություն»	1,5%
«Վրեժխնդրություն»	1,1%
«Երբ ստերը բացահայտվում են»	1,1%
«Դժվարանում եմ պատասխանել»	9,8%
Ընդամենը	100,0%

Այնուհետև հարցվածներին առաջարկվել է համաձայնություն կամ անհամաձայնություն հայտնել հետազոտական խմբի՝ ատելության խոսքի վերաբերյալ մշակված ինը դատողություններին: Հարցվածների մեծամասնությունը համարում է, որ հետևյալ չորս դատողությունները հիմնականում բնորոշում են «ատելության խոսք» հասկացությունը (տե՛ս Գծապատկեր 3).

1. «Հանրային գործիչների և կառույցների վերաբերյալ սուտ և ապատեղեկատվություն տարածելը» (63,8%),
2. «Հակառակորդներին կամ մրցակիցներին «թուրք» կամ «աղբբեջանցի» անվանելը» (63,5%),
3. «Քաղաքական հակառակորդներին անձնական վիրավորանք

Table 5. Tell me, please, what is "hate speech" in your opinion? Try to describe the concept of "hate speech" in a few words.

Response	Percentage of all responses
Responses close to the definition: "An form of public speech that expresses hate or encourages violence towards a person or group."	37.7%
Expulsion of negative energy: malice, envy, anger	24.2%
Spreading false information	8.5%
A consequence of the events of recent years	4.0%
Nikol Pashinyan	3.5%
Our feelings towards Azerbaijanis	2.3%
Manifestation of ignorance	2.1%
Behavior of a person who lacks self-confidence	2.1%
An evil and a tool to rule the modern world	2.1%
Poverty	1.5%
Revenge	1.1%
When the lies are revealed	1.1%
I find it difficult to answer	9.8%
Total	100.0%

Respondents were then asked to indicate their agreement or disagreement with nine statements made by the research team regarding "hate speech." The majority of respondents believed that the following four statements mainly define the concept of "hate speech" (See Chart 3):

1. "Spreading lies and misinformation about public figures and structures" (63.8%)
2. "Calling opponents or rivals Turks or Azerbaijanis" (63.5%)
3. "Inflicting personal insults on political opponents by a person or a group of persons" (63.3%)
4. "Emphasized hatred and insulting expressions towards

հասցնելը» (63,3%),

4. «Այլ ազգի ներկայացուցիչների դեմ ընդգծված հակակրանքն ու վիրավորական արտահայտությունները» (63,2%):

Համեմատաբար ավելի քիչ հարցվածներ համարում են, որ հետևյալ երեք դատողությունները նույնպես բնորոշում են «աստելության խոսք» հասկացությունը (*տե՛ս Գծապատկեր 3*).

5. «Մահմեդականներին կամ հեթանոսներին «հետամնաց» և «վայրենի» անվանելը» (50,2%)

6. «ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին ուղղված սեռական բնույթի հայհոյանքները» (50,2%)

7. «Քաղաքական գործիչների ելույթներում ընդդիմադիրներին պիտակավորելը, նրանց չընտրելու կոչ անելը» (48,4%)

Հարցվածների ավելի փոքր տոկոսը կարծում է, որ «աստելության խոսք» հասկացությունը բնորոշվում է նաև հետևյալ երկու դատողություններով (*տե՛ս Գծապատկեր 3*).

8. «Կանանց աշխատանքային և քաղաքական առաջխաղացման հնարավորությունների և իրավունքերի սահմանափակումը» (38,1%)

9. «Հեռուստա- և ռադիոհաղորդումներում, թերթերում հանրային գործիչների անձնական կյանքին վերաբերող փաստերի հրապարակումը» (35%):

representatives of other nations" (63.2%)

Relatively fewer respondents believed that the concept of "hate speech" is also mainly defined by the following three judgments (*See Chart 3*):

5. "Calling Muslims or Pagans backward and savage" (50.2%)

6. "Sexual insults directed at representatives of the LGBT community" (50.2%)

7. "Labeling representatives of opposition in politicians' speeches, urging not to vote for them" (48.4%)

A smaller percentage of respondents also considered the following two judgments to be the main characteristics of "hate speech". (*See Chart 3*):

8. "Restriction of women's opportunities and rights for career and political advancement" (38.1%)

9. "Publication of facts related to the personal life of public figures in television and radio programs, newspapers" (35%).

Գծապատկեր 3. Ստորև նշված դատողություններից ո՞րն է առավելապես բնորոշում «ատելության խոսք» հասկացությունը






Chart 3. Tell me, please, which of the following statements best describes the concept of "hate speech"?



Հարցվածների միայն 23,7%-ը նշեց, որ անձամբ երբևէ չի բախվել ատելության խոսքին, 62,7%-ը՝ որ հազվադեպ է բախվում, իսկ 9,9%-ը՝ որ շատ հաճախ է բախվում: Հարցվածների 3,7%-ը դժվարացավ պատասխանել այս հարցին: Հետաքրքիր է, որ երևանցիների համեմատաբար ավելի մեծ տոկոսն է նշել, որ շատ հաճախ է բախվում ատելության խոսքին (15,3%)՝ ի տարբերություն ՀՀ այլ քաղաքների (6,1%) և գյուղերի (8,1%) բնակիչների (*տե՛ս Գծապատկեր 4*):


Գծապատկեր 4. Անձամբ երբևէ բախվե՞լ եք ատելության խոսքին



Ըստ հարցվածների՝ մեր երկրում մարդիկ առավել հաճախ բախվում են ատելության խոսքի հետևյալ դրսևորումներին՝ քաղաքական հայացքները պիտակավորող (18,7%) և մարդու արտաքին տեսքը ծաղրող (18,5%), ավելի հազվադեպ՝ սեռական կողմնորոշումը քննադատող (14,5%), մտավոր կարողությունները կասկածի տակ դնող (11,5%) և ազգությունը վիրավորող (10,2%): Մյուս պատասխաններն ավելի հազվադեպ են կրկնվել: Իսկ հարցվածների 6%-ը դժվարացել է պատասխանել հետևյալ հարցին՝ «Մեր երկրում մարդիկ ատելության խոսքի ի՞նչ դրսևորումների են առավել հաճախ բախվում» (*տե՛ս Գծապատկեր 5*):

Only 23.7% of the respondents stated that they have never personally encountered "hate speech". 62.7% sometimes encounter "hate speech", and 9.9% encounter it very often, 3.7% found it difficult to answer this question. It is interesting that a relatively higher percentage of Yerevan residents stated that they often encounter "hate speech" (15.3%) compared to residents of other RA cities (6.1%) and villages (8.1%) (*See Chart 4*).



Chart 4. Tell me, please, have you personally ever encountered hate speech?



According to the respondents, people in our country most often encounter the following manifestations of "hate speech": labeling political views (18.7%) and mocking a person's appearance (18.5%), less often criticizing sexual orientations (14.5%), questioning mental abilities. (11.5%) and insulting nationality (10.2%). Other answer options were mentioned less frequently. And 6% of respondents found it difficult to answer this question (*See Chart 5*).

Գծապատկեր 5. Մեր երկրում մարդիկ ասելության խոսքի ի՞նչ դրսևորումների են առավել հաճախ բախվում

Chart 5. What manifestations of "hate speech" do people most often face in our country?



Հետաքրքիր օրինաչափություններ կարելի է նկատել պատասխանները համեմատելիս՝ ըստ հարցվածների բնակավայրերի. Երևանի բնակիչներն ավելի հաճախ նկատում են տարիքին, մաշկի գույնին, սեռին և մասնագիտությանը վերաբերող, իսկ ՀՀ այլ քաղաքների և գյուղերի բնակիչները՝ քաղաքական հայացքները պիտակավորող, մարդու արտաքին տեսքը ծաղրող և սեռական կողմնորոշումը քննադատող ասելության խոսքի դրսևորումները (տե՛ս Գծապատկեր 6):

Interesting patterns can be observed when comparing the responses of respondents from different settlements: Residents of Yerevan in our country more often notice manifestations of "hate speech" related to age, skin color, gender, and profession, while residents of other cities and villages of Armenia label political claims, mock a person's appearance, and criticize sexual orientations (See Chart 6).

Պատասխանների համեմատությունն ըստ հարցվածների սեռի էական տարբերություն ցույց տվեց միայն «քաղաքական հայացքները պիտակավորող» և «մարդու արտաքին տեսքը ծաղրող» պատասխանների պարագայում. տղամարդիկ ավելի հաճախ նկատում են քաղաքական հայացքները պիտակավորող, իսկ կանայք՝ մարդու արտաքին տեսքը ծաղրող ասելության խոսքը: Տղամարդկանց համար ավելի նկատելի են տարիքին և մասնագիտությանը, իսկ կանանց համար՝ սեռին վերաբերող ասելության խոսքը (տե՛ս Գծապատկեր 7):

A comparison of the responses of male and female respondents showed a significant difference only in the case of "labeling political views" and "mocking a person's appearance" responses; while men more often notice "hate speech" labeling political views, women - mocking a person's appearance. "Hate speech" related to age and profession is more noticeable for men, and "hate speech" for women (See Chart 7).

Գծապատկեր 6. Մեր երկրում մարդիկ ատելության խոսքի ի՞նչ դրսևորումների են առավել հաճախ բխվում (պատասխանների բաշխումն ըստ բնակավայրերի)





Chart 6. What manifestations of "hate speech" do people most often face in our country (distribution of responses by settlements)?



Գծապատկեր 7. Մեր երկրում մարդիկ ատելության խոսքի ի՞նչ դրսևորումների են առավել հաճախ բխվում (պատասխանների բաշխումն ըստ հարցվածների սեռի)






Chart 7. What manifestations of "hate speech" do people most often face in our country (distribution of answers according to gender of respondents)?



Հարցվածների գերակշիռ մասը համարում է, որ աստելության խոսքն ավելացել է թե՛ 2018-ի հեղափոխությունից, թե՛ 2020-ի Արցախյան 44-օրյա պատերազմից թե՛ 2022 թ. սեպտեմբերին սկսված ադրբեջանական ագրեսիայից հետո (համապատասխանաբար 71,3%, 79,2%, 69,4%) (տես *Գծապատկեր 8*):


Գծապատկեր 8. Ըստ Ձեզ՝ աստելության խոսքն ավելացել է, թե՛ պակասել է



Թեև բոլոր խմբերի ներկայացուցիչները համարում են, որ վերոհիշյալ իրադարձություններից հետո աստելության խոսքն ավելացել է, այդուհանդերձ հստակ կորելացիոն կապ կա ինչպես ՀՀ վարչապետի, կառավարության ու Ազգային ժողովի, այնպես էլ քաղաքական ընդդիմության գործունեության բացասական գնահատականների և աստելության խոսքի ավելացման մասին վկայող պատասխանների միջև: Այն հարցվածները, որոնք բացասական են գնահատում նշված կառույցների գործունեությունը, ավելի հաճախ են նշում նաև, որ աստելության խոսքն ավելացել է նշված իրադարձություններից հետո (տես *Գծապատկերներ 9, 10, 11*):


The majority of the respondents consider that "hate speech" has increased equally in 2018, after the revolution, in 2020, after the 44-day Artsakh war, in 2022, after the Azerbaijani aggression, which took place in September: 71.3%, 79.2%, 69.4% respectively (*See Chart 8*).

Chart 8. In your opinion, has hate speech increased or decreased?




Although the representatives of all groups consider that "hate speech" has increased after the above-mentioned events, there is a clear correlation between the negative assessments of the activities of the RA Prime Minister, the Government and the National Assembly, as well as the political opposition and the answers indicating the increase of "hate speech" (after the revolution of 2018, after the 44-day war of 2020, and after the Azerbaijani aggression in 2022). Respondents who negatively assess the activities of the mentioned structures also more often state that "hate speech" increased after the mentioned events (*See Charts 9, 10, 11*).

Գծապատկեր 9. «2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է» պատասխանն ընտրած հարցվածների տոկոսը ՀՀ վարչապետի, կառավարության, Ազգային ժողովի և քաղաքական ընդդիմության գործունեությունը «ավելի շուտ դրական», «ավելի շուտ բացասական» գնահատածների և գնահատել դժվարացածների համախմբություններում:



Ինչպես վկայում են Գծապատկեր 9-ում բերված տվյալները, ՀՀ վարչապետի գործունեությունը «ավելի շուտ բացասական» գնահատած հարցվածների 85,7%-ն է համարում, որ 2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է: Իսկ ՀՀ վարչապետի գործունեությունը «ավելի շուտ դրական» գնահատածների և գնահատել դժվարացածների համեմատաբար ավելի փոքր տոկոսն է համարում, որ 2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է (համապատասխանաբար՝ 57,7% և 55,4%): ՀՀ ԱԺ գործունեությունը «ավելի շուտ բացասական» գնահատած հարցվածների 81%-ն է համարում, որ 2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է: Իսկ ՀՀ

Chart 9. The percentage of respondents who chose the answer "hate speech has increased after the revolution of 2018" among those who assessed the activities of the RA Prime Minister, the government, the National Assembly and the political opposition as "rather positive", "rather negative" and those who found it difficult to assess.



As the data in Chart 9 shows, 85.7% of the respondents who evaluated the activities of the RA Prime Minister rather negatively consider that "hate speech" has increased after the revolution of 2018. And the relatively lower percentage of those who evaluated the activities of the Prime Minister of RA rather positively and those who found it difficult to evaluate them consider that "hate speech" has increased after the revolution of 2018, 57.7% and 55.4%, respectively. 81% of the respondents who evaluated the activities of the RA National Assembly rather negatively consider that "hate speech" has increased after the revolution of 2018.

ԱԺ գործունեությունը «ավելի շուտ դրական» գնահատածների և գնահատել դժվարացածների համեմատաբար ավելի փոքր տոկոսն է համարում, որ 2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է (համապատասխանաբար՝ 51,7% և 54,3%): ՀՀ կառավարության գործունեությունը «ավելի շուտ բացասական» գնահատած հարցվածների 81,7%-ն է համարում, որ 2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է: Իսկ ՀՀ կառավարության գործունեությունը «ավելի շուտ դրական» գնահատածների և գնահատել դժվարացածների համեմատաբար ավելի փոքր տոկոսն է համարում, որ 2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է (համապատասխանաբար՝ 58% և 56,7%): ՀՀ քաղաքական ընդդիմության գործունեությունը «ավելի շուտ բացասական» գնահատած հարցվածների 73,7%-ն է համարում, որ 2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է: Իսկ ՀՀ քաղաքական ընդդիմության գործունեությունը «ավելի շուտ դրական» գնահատածների և գնահատել դժվարացածների համեմատաբար ավելի փոքր տոկոսն է համարում, որ 2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է (համապատասխանաբար՝ 69,2% և 57,3%) (*տե՛ս Գծապատկեր 9.1.*):

Whereas the relatively lower percentage of those who evaluated the activities of the RA NA rather positively and those who found it difficult to evaluate consider that "hate speech" has increased after the revolution of 2018, 51.7% and 54.3%, respectively. 81.7% of the respondents who evaluated the activities of the RA Government rather negatively consider that "hate speech" has increased after the revolution of 2018. And the relatively lower percentage of those who evaluated the activities of the RA Government rather positively and those who found it difficult to evaluate them consider that "hate speech" has increased after the revolution of 2018, 58% and 56.7%, respectively. 73.7% of respondents who evaluated the activities of the RA political opposition rather negatively consider that "hate speech" has increased after the revolution of 2018. And the relatively lower percentage of those who evaluated the activities of the RA political opposition rather positively and those who found it difficult to evaluate them consider that "hate speech" has increased after the revolution of 2018, 69.2% and 57.3%, respectively (*See Chart 9.1.*).

Գծապատկեր 9.1. «2018 թ. հեղափոխությունից հետո ատելության խոսքն ավելացել է» պատասխանն ընտրած հարցվածների տոկոսը ՀՀ վարչապետի և քաղաքական ընդդիմության գործունեությունը «ավելի շուտ դրական», «ավելի շուտ բացասական» գնահատածների և գնահատել դժվարացածների համախմբություններում:





Chart 9.1. Percentage of respondents who chose the answer "'hate speech' has increased after the revolution of 2018" among those who evaluated the activities of the RA Prime Minister and the political opposition as "rather positive", "rather negative" and those who found it difficult to evaluate.



Գծապատկեր 10. «44-օրյա պատերազմից հետո ատելության խոսքն ավելացել է» պատասխանն ընտրած հարցվածների տոկոսը ՀՀ վարչապետի, կառավարության, ԱԺ և քաղաքական ընդդիմության գործունեությունը «ավելի շուտ դրական», «ավելի շուտ բացասական» գնահատածների և գնահատել դժվարացածների համախմբություններում:






Chart 10. The percentage of respondents who chose the answer "'hate speech' has increased after the 44-day war" among those who evaluated the activities of the RA Prime Minister, the government, the National Assembly and the political opposition as "rather positive", "rather negative" and those who found it difficult to



Գծապատկեր 10-ում բերված տվյալների համաձայն՝ ՀՀ վարչապետի գործունեությունը «ավելի շուտ բացասական» գնահատած հարցվածների 86,8%-ն է համարում, որ 44-օրյա պատերազմից հետո ատելության խոսքն ավելացել է: Իսկ ՀՀ վարչապետի գործունեությունը «ավելի շուտ դրական» գնահատածների և գնահատել դժվարացածների համեմատաբար ավելի փոքր տոկոսն է համարում, որ 44-օրյա պատերազմից հետո ատելության խոսքն ավելացել է (համապատասխանաբար՝ 73,2% և 69,6%): ՀՀ ԱԺ գործունեությունը «ավելի շուտ բացասական» գնահատած հարցվածների 84,7%-ն է համարում, որ 44-օրյա պատերազմից հետո ատելության խոսքն ավելացել է: Իսկ ՀՀ ԱԺ գործունեությունը «ավելի շուտ դրական» գնահատածների և գնահատել դժվարացածների համեմատաբար ավելի փոքր տոկոսն է համարում, որ 44-օրյա պատերազմից հետո ատելության խոսքն ավելացել է (համապատասխանաբար՝ 73,3% և 66,8%): ՀՀ կառավարության գործունեությունը «ավելի շուտ բացասական» գնահատած հարցվածների 84,5%-ն է համարում, որ 44-օրյա պատերազմից հետո ատելության խոսքն ավելացել է: Իսկ ՀՀ կառավարության գործունեությունը «ավելի շուտ դրական» գնահատածների և գնահատել դժվարացածների համեմատաբար ավելի փոքր տոկոսն է համարում, որ 44-օրյա պատերազմից հետո ատելության խոսքն ավելացել է (համապատասխանաբար՝ 79,9% և 66,9%): ՀՀ քաղաքական ընդդիմության գործունեությունը «ավելի շուտ բացասական» գնահատած հարցվածների 83,7%-ն է համարում, որ 44-օրյա պատերազմից հետո ատելության խոսքն ավելացել է: ՀՀ քաղաքական ընդդիմության գործունեությունը «ավելի շուտ դրական» գնահատածների նույնպես մեծ մասն է այդ կարծիքին (83,3%): Իսկ ՀՀ քաղաքական ընդդիմության գործունեությունը գնահատել դժվարացածների համեմատաբար ավելի փոքր տոկոսն է համարում, որ 44-օրյա պատերազմից հետո ատելության խոսքն ավելացել է (64,8%) (տե՛ս Գծապատկեր 10.1.):

- Հարցվածների 28,1%-ը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում որպես ատելության խոսք տարածող նշել է Վարդան Ղուկասյանի (Դոգ) անունը, 16,8%-ը՝ գրառումների տակ արվող մեկնաբանությունները, 11,2%-ը՝ կեղծ օգտահաշիվները, 8,4%-ը՝ օգտատերերի գրառումները, 0,8%-ը՝ ֆեյսբուքյան խմբերը: Հիշատակվել են նաև Ֆեյսբուքում բազմահազար հետևորդներ ունեցող օգտատերեր Արիաննա Հովսեփյանի (1,6%), Արթուր Դանիելյանի (0,5%), Ռեգինե Պոստյանի (0,4%) և Նարեկ Մալյանի (0,3%) անունները:

- Տեղեզրամյան ալիքներից որպես ատելության խոսք տարածող հարթակ դարձյալ առավել հաճախ նշվել է Վարդան Ղուկասյանի (Դոգ) (9,2%): 1,1%-ն առանձնացրել է «Բաղրամյան 25» ալիքը, 0,6%-ը՝ «Զոնա Պոզիտիվ», 0,5%-ը՝ «Ռադար Արմենիա», 0,2%-ը՝ «Դուխով»,

- According to 6.1% of the respondents, "hate speech" is heard in programs and interviews with political themes on Channel 5, 2.2% mentioned news programs, 0.8% - entertainment and humorous programs, once the program "Tête a tête" was mentioned.

- Among the Online Media, Lurer.am (6.2%), Armtimes.am (5.3%), Armnews.am (5.1%), lin.am (3.2%), Hraparak.am (3%), News.am (2.2%), Yerevantoday.am (2.0%), Lragir.am (1.8%), Armlur.am (1.8%), Panarmenia.am (1.1%), Mamul.am (0.8%), 168.am (0.6%) and Asekose.am (0.3%).

- Among the printed media, "Hraparak" daily (0.8%), "Iravunk" (0.4%) and "Aravot" (0.2%) were mentioned.

- On Facebook, 28.1% of respondents mentioned Vardan Ghukasyan (Dog), 16.8% - comments under posts, 11.2% - fake profiles, 8.4% - user posts, 0.8% - Facebook groups, as sources spreading "hate speech" on this social network. Arianna Hovsepyan (1.6%), Artur Danielyan (0.5%), Regina Prazyan (0.4%) and Narek Malyan (0.3%) with thousands of Facebook followers were also mentioned.

- Among Telegram channels, Vardan Ghukasyan (Dog) was again mentioned most often as a platform spreading "hate speech" (9.2%). 1.1% have outlined "Baghramyan 25" channel, 0.6% - "Zona Positiva", 0.5% - "Radar Armenia", 0.2% - "Dukhov", 0.1% - Yeranuhi Matosyan and 0.1% - "Xacherubka". 5.2% of respondents mentioned comments in general, 2.2% - live broadcasts, 1.8% - video clips.

- Among the YouTube channels, Vardan Ghukasyan (Dog) was again mentioned the most frequently (19.7%). 2% of respondents mentioned "Half-open windows", 0.2% - "Public Voice" channel. 0.4% mentioned cartoons, one of which was the "Animals" cartoon series. 1.8% mentioned comments, 1.6% - news channels, 1.5% - live broadcasts, 0.2% - games. "Catboy Kami" and "Benjamin Bennett" were mentioned once each.

0,1%-ը՝ Երանուհի Մաթոսյանի ալիքը և 0,1%-ը՝ «Xacherubka»: Հարցվածների 5,2%-ը նշել է առհասարակ մեկնաբանությունները, 2,2%-ը՝ ուղիղ եթերները, 1,8%-ը՝ վիդեոհոլովակները:

- Յուրայության ալիքներից դարձյալ ամենահաճախը նշվել է Վարդան Ղուկասյանին (Դոգ) (19,7%): Հարցվածների 2%-ը նշել է «Կիսաբաց լուսամուտներ», 0,2%-ը՝ «Հանրային ձայնը» ալիքները: 0,4%-ը նշել է մուլտֆիլմերը, այդ թվում մեկ հարցված՝ «Անասուններ» մուլտսերիալը: 1,8%-ը նշել է մեկնաբանությունները, 1,6%-ը՝ լրատվական ալիքները, 1,5%-ը՝ ուղիղ եթերները, 0,2%-ը՝ խաղերը: Մեկական անգամ նշվել են «Catboy Kami»-ն և «Benjamin Bennet»-ը:

- Բլոգերների շարքում որպես ասեւլության խոսք տարածողի դարձյալ ամենահաճախը նշել են Վարդան Ղուկասյանին (Դոգ) (15,8%): Շատ ավելի հազվադեպ նշվել են առհասարակ բլոգերների ուղիղ եթերները (2,2%): Գագիկ Մոդոմոնյանին նշել է հարցվածների 0,7%-ը, Գնել Սարգսյանին՝ 0,5%-ը, Գլենդելի Քիսոյին՝ 0,5%-ը, Արթուր Դանիելյանին՝ 0,2%-ը, աստղաբան Լուսյա Հակոբյանին՝ 0,2%-ը, մեկական անգամ հիշատակվել են Նաիրի Հոխիկյանի, Արթուր Այվազյանի (Մոնախ) և Քինգ Ռուզիի անունները:

- «Տիկտոկ» սոցիալական հարթակում որպես ասեւլության խոսք տարածող նշել են մեկնաբանությունները (3,2%), քաղաքական թեմաներով բլոգերներին (2%), վիդեոհոլովակները (1,7%), ադրբեջանական էջերը (0,5%): Մեկական անգամ նշվել են «Ալեքս», «Թիթիզ» և «Քինգ Ռուզի» ալիքները:

- Տարբեր հարթակներում ամենահաճախ հիշատակված ասեւլության խոսք տարածող բլոգերը Վարդան Ղուկասյանն է. նրա անունը մեկ կամ մի քանի հարթակում նշել է հարցվածների 30,3%-ը:

- Ըստ հարցվածների մեծամասնության՝ մարդիկ օգտվում են ասեւլության խոսք տարածող հարթակներից, քանի որ՝

- Among the Bloggers, Vardan Ghukasyan (Dog) (15.8%) was again mentioned as the one spreading "hate speech". Live broadcasts of bloggers were mentioned much less frequently (2.2%) in general. Gagik Soghomonian was mentioned by 0.7% of the respondents, Gnel Sargsyan - 0.5%, Kiso of Glendale - 0.5%, Arthur Danielyan - 0.2%, Astrologer Lusya Hakobyan - 0.2%, Nairi Hoxhikyan, Artur Ayvazyan (Monakh) and King Ruzi were mentioned by one respondent each.

- 3.2% mentioned comments on the TikTok social platform as spreading "hate speech", 2% bloggers on political topics, 1.7% video clips, 0.5% Azerbaijani pages. The channels "Alex", "Titiz" and "King Ruzi" were mentioned once.

- Vardan Ghukasyan, the most frequently mentioned blogger spreading "hate speech" on various platforms, his name was mentioned on one or more platforms by 30.3% of respondents.

- According to the majority of respondents, people use platforms that spread "hate speech" because they are not sufficiently informed (64.1%), these platforms contain sharp criticism (63.3%), it is a manifestation of their ignorance (59.4%), they like this attitude (58.6%), they are only able to discharge in this way (53.4%), those platforms use simple and understandable language (48.4%).

«բավականաչափ իրազեկված չեն» (64,1%), «այդ հարթակները սուր քննադատություն են պարունակում» (63,3%), «դա նրանց սոցիալական դրսևորումն է» (59,4%), «նրանց դուր է գալիս նման տրամադրվածությունը» (58,6%), «միայն այդպես են կարողանում լիցքաթափվել» (53,4%), «այդ հարթակները պարզ և հասկանալի լեզու են օգտագործում» (48,4%):

- Հատկանշական է, որ մյուս երկու դատողություններին հարցվածների շատ ավելի փոքր տոկոսն է համաձայնություն հայտնել՝ «ուրիշ վստահելի աղբյուր չկա» (20,1%), «այնտեղ տեղեկությունները վստահելի են» (19,3%): Հարցվածների շուրջ 20%-ն է ատելության խոսք տարածող հարթակներն ավելի վստահելի համարում:

- Ըստ հարցվածների՝ մարդիկ սպառում են ատելության խոսքը, քանի որ՝ «մարդիկ սկսել են իրար ատել» (22,2%), «քաղաքական որոշակի ուժեր են հրահրում» (15,9%):

- Հարցվածների մեծամասնությունը համարում է, որ ատելության խոսքը բացասական ազդեցություն ունի թե՛ անձամբ իր (72,1%), թե՛ իր ընտանիքի անդամների (73,1%), թե՛ երեխաների (67,5%), թե՛ ամբողջ հասարակության (67,6%), թե՛ ատելության խոսքի թիրախի վրա (67,4%):

- Ատելության խոսքը տարածողների վրա ազդեցությունը բացասական է համարում հարցվածների միայն 32,1%-ը, իսկ 36,8%-ը կարծում է, որ ատելության խոսքը տարածողների վրա դրական ազդեցություն է թողնում, քանի որ նրանք նման ձևով լիցքաթափվում են:

- Հարցվածների 4,7%-ը (50 հարցված) համարում է, որ ատելության խոսքը դրական ազդեցություն ունի ատելության խոսքի թիրախի վրա: Նման պատասխանի տարբերակ ընտրածների մեծ մասը Երևան քաղաքի արական սեռի բնակիչներ են:

- It is noteworthy that a significantly lower percentage of respondents agreed with the other two judgments: "there is no other reliable source" (20.1%), "the information there is reliable" (19.3%). About 20% of the respondents consider platforms that spread "hate speech" more reliable.

- According to the respondents, people consume "hate speech" because "people have started to hate each other" - 22.2% and "certain political forces incite it" - 15.9%.

- The majority of respondents consider that the "hate speech" has a negative impact on them personally (72.1%), on their family members (73.1%), on children (67.5%), and on society as a whole (67.6%), and on the target of "hate speech" (67.4%).

- Only 32.1% of respondents consider the impact on the person spreading "hate speech" to be negative, and 36.8% consider that "hate speech" has a positive effect on them, because those spreading "hate speech" are discharged in this way.

- 4.7% of respondents (50 respondents) believe that "hate speech" has a positive effect on the target of hate speech. Most of those who chose such an answer option are male residents of Yerevan city.

- According to the respondents, "hate speech" leads to a decline in mood, the spread of aggression and negative energy.

- As an effective way to protect citizens from "hate speech", the respondents most often mentioned "Banning of mass media/channels/pages/blogs spreading hate speech" - 23.9%. "Punishing those who spread hate speech" was chosen by 18.9% of respondents. A slightly smaller percentage chose awareness as an influencer, 18.1%. 16.3% of respondents

- Ըստ հարցվածների՝ ատելության խոսքը հանգեցնում է տրամադրության անկմանը և ագրեսիայի ու բացասական էներգիայի տարածմանը:
- Որպես ատելության խոսքից քաղաքացիներին պաշտպանելու ազդեցիկ միջոց հարցվածներն առավել հաճախ նշել են «ատելության խոսք տարածող ՋԼՄ-ների/ալիքների/էջերի/բլոգների արգելքը» (23,9%), «ատելության խոսք տարածողներին պատժելը» (18,9%): Աննշան ավելի քիչ հարցվածներ իրազեկումը նշել են որպես ազդեցիկ միջոց (18,1%): Հարցվածների 16,3%-ը կարևորել է պաշտոնական խոդովակներով ճշմարիտ և պատշաճ տեղեկատվության տրամադրումը, իսկ 16,2%-ը՝ նշել, որ պետք է պահանջել հեռացնել ատելության խոսք պարունակող հրապարակումները:
- Հարցվածների 4,1%-ը համարում է, որ ատելության խոսքի տարածման դեմ որևէ միջոց ձեռնարկել պետք չէ, քանի որ դա հակասում է խոսքի ազատությանը:

- emphasized the importance of providing true and proper information through official channels, and 16.2% believe that it is necessary to demand the removal of publications containing hate speech.
- 4.1% of the respondents consider that it is not necessary to take any measures against the spread of "hate speech", because it contradicts the freedom of speech.

ՏՈԿՈՒՍԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՍՓՈՓՈՒՄ



FOCUS GROUP DISCUSSION SUMMERY

«Ատելության խոսքի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության և հանդուրժողականության հաստատման» ծրագրի շրջանակում անցկացվել են ֆոկլուսխմբային քննարկումներ և խորին հարցազրույցներ՝ ատելության խոսքի դեմ պայքարի գործընթացում շահագրգիռ և ոլորտի հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող տարբեր շրջանակներից մասնագիտական մեկնաբանություններ, առաջարկություններ և դիտարկումներ հավաքագրելու և արձանագրումներ կատարելու նպատակով:

Ֆոկլուսխմբային քննարկումներն անցկացվել են ատելության խոսքի հասկացության ու դրսևորումների, ինչպես նաև ատելության խոսքի հաղթահարման վերաբերյալ նախապես հավաքագրված հանրային կարծիքի հետազոտությունների միջոցով ստացված քանակական տվյալների հիման վրա:

Ընտրվել են մասնագիտական տարբեր համայնքներ կերպայացնող փոքր խմբեր: Ֆոկլուսխմբային քննարկումներում կիրառվել է ձևակույտի (Դելֆի) մեթոդը, ըստ որի՝ խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է բացահայտված խնդրի պատճառը, ինչից հետո մյուս մասնակիցները համաձայնություն կամ անհամաձայնություն են հայտնում: Բացի այդ՝ կիրառվել են սիներգիկ էֆեկտի, ինտուիտիվ խորաթափանցության, անվտանգության առավելությունները: Ֆոկլուսխմբային քննարկումների արդյունքներից յուրաքանչյուրն ամփոփվել է առանձին գլխով՝ ըստ հնչեցված հարցի:

¹Խմբից ավելի շատ տեղեկություն է ստացվում, քան յուրաքանչյուր անդամի հետ առանձին գրուցելուց:

²Սովորաբար լավ գաղափարները ծնվում են անսպասելի՝ խմբում, այլ ոչ թե մեկ մարդու հետ հարցազրույցում:

³Սա հնարավորություն է տալիս, ավելի մոտ համոզմունքներով և մտածողությամբ մարդկանց մեկ խմբում միավորելով, առավել դյուրին դարձնել քննարկման մասնակիցներից յուրաքանչյուրի անհատական ինքնադրսևորումը:

Focus group discussions and in-depth interviews were conducted within the framework of the “Combating hate speech for the sake of establishing pluralism and tolerance in a democratic society” project in order to collect and record professional interpretations, suggestions and observations from various circles interested in the process of combating hate speech and directly or indirectly related to the field.

Focus group discussions were conducted on the basis of quantitative data obtained through pre-collected public opinion surveys on the concept and manifestations of hate speech, as well as on overcoming hate speech.

Small groups representing different professional communities were selected. The snowball (Delphi) method was used in the focus group discussions, according to which each member of the group presents the cause of the identified problem, after which the other participants express agreement or disagreement. In addition, the advantages of synergistic effect, intuitive insight and security were applied.

Each of the results of the focus group discussions was summarized in a separate chapter according to the question raised.

¹More information is obtained from the group than from talking to each member individually.

²Usually, good ideas are born out of the blue, in a group, not in an interview with one person.

³This makes it possible, by uniting people with closer beliefs and mindset in one group, to make the individual self-expression of each of the discussion participants easier.

1. Հանրային կարծիքի ուսումնասիրությունից ստացվել է տվյալ, համաձայն որի՝ ատելության խոսք ամենից շատ տարածում են քաղաքական գործիչները: Ո՞րն է նման կարծիքի ձևավորման պատճառը:

1.1. Ինչո՞ւ են քաղաքացիներն այդ կարծիքին հանգել: Համամի՞տ եք նրանց հետ: Ինչո՞ւ են քաղաքական գործիչներն իրենց ելույթներում ատելության խոսք կիրառում:

1.2. Քաղաքական գործիչների շրջանում ատելության խոսքի կիրառումը նվազեցնելու համար ինչպիսի՞ իրավական և գործնական առաջարկներ ունեք:

1.3. Որպես ատելության խոսքի տարածման երկրորդ ամենակտիվ հարթակ հիշատակվել է Ֆեյսբուքը: Ինչո՞ւ է Ֆեյսբուքն ամենակտիվ հարթակներից մեկն ատելության խոսքի տարածման գործում: Ո՞րն է ստեղծված իրավիճակից առավել արդյունավետ ելքը:

1.4. Հանրության լայն զանգվածներ պնդում են, որ ատելության խոսքի տարածման հիմնական հարթակներ են նաև հեռուստատեսությունն ու տեղեկատվական առցանց հարթակները: Ի՞նչ եք կարծում. ատելության խոսքի տարածման համար պե՞տք է արդյոք ենթարկվեն պատասխանատվության: Եթե՝ այո, ապա ո՞վ պետք է առաջին հերթին ենթարկվի պատասխանատվության:

1.5. Հասարակությունը պնդում է, որ ատելություն խոսք տարածողները պետք է պատժվեն: Իրավական ինչպիսի՞ մեխանիզմներ է հարկավոր ներդնել, որպեսզի հասարակության նշված պահանջը բավարարվի, սակայն այդ այսպես կոչված պատիժը լինի իրավական (անհրաժեշտ և բավարար) սահմաններում: Դա պետք է լինի քրեական, թե՞ վարչական պատասխանատվության դաշտում, թե՞ զուտ մասնավոր տիրույթում փոխհատուցման պահանջ պետք է ներկայացվի:

1. From the study of public opinion, data was obtained, according to which politicians spread hate speech the most. What is the reason for forming such an opinion?

1.1. Why did the citizens come to that opinion? Do you agree with them? Why do politicians use hate speech in their speeches?

1.2. What legal and practical suggestions do you have for reducing the use of hate speech among politicians?

1.3. Facebook was mentioned as the second most active platform for spreading hate speech. Why is Facebook one of the most active platforms in spreading hate speech? What is the most effective way out of the created situation?

1.4. Wide masses of the public claim that television and online information platforms are also the main platforms for the spread of hate speech. What do you think. Should they be held accountable for spreading hate speech? If yes, then who should be held responsible first?

1.5. Society insists that those who spread hate speech should be punished. What kind of legal mechanisms need to be implemented so that the stated demand of the society is met, but the so-called punishment is within the legal (necessary and sufficient) limits? Should it be in the field of criminal or administrative responsibility, or should a claim for compensation be made in the private domain?

2. Another picture emerges from public opinion research.

2.1. Many view hate speech as a manifestation of freedom of speech and consider restrictions unacceptable. Where is the line between hate speech and freedom of speech?

2. Հանրային կարծիքի հետազոտությունից ուրվագծվել է ևս մեկ պատկեր:

2.1. Շատերն ատելության խոսքը դիտարկում են որպես խոսքի ազատության դրսևորում, և սահմանափակումներն անընդունելի համարում: Որտե՞ղ է ատելության խոսքի և խոսքի ազատության սահմանագիծը:

3. Հանրային կարծիքի ուսումնասիրության ժամանակ հարց է տրվել, թե մարդիկ ինչու են օգտագործում ատելության խոսքն էլեկտրոնային հարթակներում:

3.1. Առանձնակի ուշագրավ է այն հանգամանքը, որ հարցվածները կարծում են, թե մարդիկ ատելության խոսք տարածող հարթակներից օգտվում են, քանի որ այն սուր քննադատություն է պարունակում: Ի՞նչ էք կարծում արդյո՞ք որևէ մարմին պետք է վերահսկի լրատվական գործունեություն իրականացնող սուբյեկտների շրջանում ատելության խոսքի տարածման դեպքերը: Եթե՞ այո, ապա՞ ո՞ր մարմինը և ի՞նչ եղանակ(ներ)ով:

4. Արդյո՞ք ինքնակարգավորման մեխանիզմները (օրինակ՝ ՋԼՄ-ի, դոմեյն տրամադրողների ընդունած) կարող են բավականաչափ արդյունավետ միջոց լինել ատելության խոսքի գեներացման և տարածման դեմ պայքարում:

5. Ձեր աշխատանքում ներպետական օրենսդրության ինչպիսի՞ բացեր էք նկատել, որոնք կարող են վերաբերելի լինել ատելության խոսքի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

6. Ի՞նչ է հարկավոր անել, որ ատելության խոսքի դեմ պայքարը հաջողությամբ պսակվի:

Ամփոփագրերում տեղ են գտել ֆոկլուսիմբային քննարկման մասնակիցների ներկայացրած գաղափարներն ուղղակի և անուղղակի մեջբերումների, ինչպես նաև ընդհանրացումների միջոցով:

Ֆոկլուսիմբային քննարկումներն ամփոփվել են՝ ըստ հանրային կարծիքի հետազոտությունից ստացված հարցադրումների

3.A public opinion survey asked why people use hate speech on electronic platforms.

3.1. It is particularly noteworthy that the respondents believe that people use hate speech platforms because they contain sharp criticism. What do you think. should any body control the cases of spreading of hate speech among media entities? If yes, which body and in what way(s)?

4. Can self-regulation mechanisms (for example, adopted by mass media, domain providers) be a sufficiently effective means of combating the generation and spread of hate speech?

5. What kind of gaps in domestic legislation have you noticed in your work, which may be relevant to increasing the effectiveness of the fight against hate speech?

6. What needs to be done for the fight against hate speech to be successful? The summaries included the ideas presented by the focus group discussion participants through direct and indirect quotations, as well as generalizations.

The focus group discussions were summarized according to the recommendations of the professional groups regarding the questions obtained from the public opinion survey, in the following order:

1. representatives of the legal community,
2. representatives of the journalistic community,
3. representatives of the RA Television and Radio Commission,
4. representatives of the media ethics monitoring body,
5. representatives of the RA Prosecutor's Office

վերաբերյալ մասնագիտական խմբերի առաջարկությունների՝
հետևյալ հաջորդականությամբ.

1. իրավաբան ներկայացուցիչներ,
2. լրագրող ներկայացուցիչներ,
3. Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և
ռադիոյի հանձնաժողովի ներկայացուցիչներ,
4. ՋԼՄ էթիկայի դիտորդ մարմնի ներկայացուցիչներ,
5. Հայաստանի Հանրապետության դատախազության
ներկայացուցիչներ:

1. Ովքե՞ր են ատելության խոսք տարածում:

1.1. Ինչո՞ւ է հասարակությունը վստահ, որ ատելության խոսք ամենից շատ տարածում են քաղաքական գործիչները:

Հարկ է նկատել, որ հանրության այն կարծիքը, համաձայն որի՝ ատելության խոսք առավել հաճախ տարածում են քաղաքական գործիչները, հաստատվում է մասնագիտական խմբերի քննարկման ընթացքում մասնագետներն իրենց տեսակետները ներկայացնում են՝ բազմաթիվ օրինակներով բերելով:

Իրավաբանների ֆոկլուսխմբային քննարկման մասնակիցները կարծում են, որ քաղաքացիները հանգել են այդ կարծիքին, քանի որ քաղաքական գործիչների, հատկապես ընդիմադիրների 70-80%- ի շրջանում շատ ակնհայտ է ատելության խոսքը: Առանձնացվել են նաև կուսակցության կամ խմբակցության անդամ քաղաքական գործիչները, որոնք դիտարկվում են որպես ատելության խոսքի հիմնական տարածողներ: Իրավաբանները համոզմունք են հայտնել, որ ատելության խոսքի թիրախում առավել հաճախ հայտնվում են իշխանության ներկայացուցիչները, առավելապես՝ ինչ-որ օրենսդրական նախաձեռնության քննարկման ժամանակ: Գլխավորապես ընդգծվել է Ֆեյսբուքի աննախադեպ դերակատարությունը քաղաքական հիմքով ատելության խոսքի տարածման գործում: Մասնավորապես ասվել է.

«Ես, օրինակ, կառանձնացնեի «Ֆեյսբուք» սոցիալական ցանցը և քաղաքական գործիչների էլոյթները: Ֆեյսբուքում ավելի շատ է հանդիպում, քանի որ հիմնականում դիմացինը չի հակադարձում: Բացի այդ՝ քաղաքական գործիչներն ավելի ազատ են սոցիալական հարթակներում, ինչպես նաև ավելի մեծ լսարան ունեն, քան Ազգային ժողովի էլոյթների ժամանակ, որոնք հեռուստատեսությամբ են ցուցադրվում»:

1. Who is spreading hate speech?

1.1. Why is society confident that politicians spread hate speech the most?

It is worth noting that the opinion of the public, according to which politicians spread hate speech most often, is confirmed during the discussion of professional groups, specialists present their views with many examples.

The participants of the focus group discussion of lawyers believe that the citizens have come to this opinion, because among 70-80% of politicians, especially the opposition, hate speech is very obvious. Politicians who are members of the party or faction, who are considered as the main spreaders of hate speech, were also singled out. Lawyers have expressed their belief that representatives of the government are the targets of hate speech, especially during the discussion of some legislative initiative.

The unprecedented role of Facebook in the spread of hate speech on a political basis was mainly emphasized. In particular, it was said:

"For example, I would single out the Facebook social network and the speeches of politicians. It is more common on Facebook, because the other person generally does not reciprocate. In addition, politicians are freer on social platforms and also have a larger audience than during National Assembly speeches that are televised."

Այս համատեքստում նաև նշվել է, որ քաղաքական գործիչներն ասելության խոսք և այլաբնույթ զգայուն բովանդակություն են տարածում ընտրվելու համար, քանի որ իշխանության ու ընդդիմության միջև պայքար է ընթանում:

ՀՌՀ-ի ներկայացուցիչները թեև արժանահավատ են համարում այն տեղեկությունը, որ, մարդկանց մեծամասնության համոզմամբ, ասելության խոսքն առավելապես տարածվում է քաղաքական խոսույթում, սակայն նշում են նաև, որ հասարակությունը ևս նպաստում է այդ ամենին: Մասնավորապես բերվել է այն օրինակը, որ շատ հաճախ տեղեկատվական հաղորդումները շատ ավելի քիչ են դիտվում, քան, օրինակ, ասելության խոսքով հեղեղված «Գնանք սպանենք, մի բան անենք» բովանդակություն ունեցողները:

«Մարդը, միևնույնն է, հոգեբանորեն ուզում է լսել այդ հռետորաբանությունը. իր համար ավելի գրավիչ է, որ լսի հռետորական այդ խոսքերը, ու չի նայում՝ ելույթ ունեցողն իր խոսքում սահմանն անցե՞լ է, թե՞ ոչ: Նա միանգամից դա է ավելի ոգևորված լսում»:

Ըստ ՀՌՀ-ի՝ քաղաքական գործիչներն ասելության խոսք են կիրառում, որ ժողովրդին ավելի մոտ երևան. դա նրանց համար «գործիքակազմ» է դարձել: Ժամանակակից քաղաքական դաշտում դրա կիրառումը մեծ կարևորություն է ձեռք բերել:

Մասնակիցներից մեկը համոզված է, որ ասելության խոսքի համար հիմք ծառայող այլատյացությունը հայաստանյան հասարակության մեջ սերմանվել է դեռևս խորհրդային շրջանից, սակայն հետանկախության տարիներին առավել ծայրահեղ դրսևորումներ է ստացել: Մասնավորապես նշում է.

In this context, it was also noted that politicians spread hate speech and other sensitive content in order to be elected, because there is a struggle between the government and the opposition.

Although the representatives of the RA Television and Radio Commission consider credible the information that, according to the majority of people, hate speech is spread mostly in political speech, they also note that the society also contributes to all this. In particular, the example given was that very often informational programs are viewed much less than, for example, those with content filled with hate speech, “Let’s kill, do something.”

“A person psychologically wants to hear that rhetoric anyway. It is more attractive for them to listen to those rhetorical words, and they do not look at whether the speaker crossed the line in their speech or not. They immediately listen to it more enthusiastically.”

According to the RA Television and Radio Commission, politicians use hate speech to appear closer to the people. It has become a “toolkit” for them. Its application has gained great importance in the modern political field.

One of the participants is convinced that xenophobia, which serves as a basis for hate speech, has been instilled in Armenian society since the Soviet period, but it has received more extreme manifestations in the post-independence years. In particular, he notes:

«Սովետական միությունը քաջալերում էր ատելության խոսքը ցանկացած այլ խմբի դեմ, և դա շարունակել է նորմ մնալ նաև անկախությունից հետո: Բայց եթե նախկինում դա սահմանափակված էր սահմանափակ ռեսուրսով, այսինքն՝ մի ալիք էր, քիչ թե շատ հետևում էինք, կամ մի քանի թերթ էր, որ տասնյակ բարիերներ ուներ (խմբագիր էր, կորեկտոր էր թույլ չէին տալիս), ապա հիմա ոչ մի բան չկա: Ես նկատել եմ, որ ատելության խոսքն ավելի շատ կողմնակիցներ ունի, քան հավասարակշռված խոսքը»:

Լրագրողներն ի սկզբանե ընդգծում են, որ ատելության խոսքը փաստացիորեն ավելի «պահանջված» է քաղաքականության մեջ, և այսօր դա ամենուր է, որովհետև «ինչպես պտտվում ենք և որ կողմ պտտվում ենք, ատելության խոսք է, և այս առումով պետք է ուշադրություն դարձնել այդ հանգամանքին»:

Լրագրողներից մեկը, ներկայացնելով մշտադիտարկումներ կատարելու անձնական փորձը, ասում է, որ հանգել է հետևյալ եզրակացությանը. լրատվամիջոցները փաստացի հարթակ են, որտեղից տարածվում է բացառապես հանրային գործիչների շուրթերից հնչող ատելության խոսքը: Նա նշում է, որ ատելության խոսք նկատվում է առավելապես Հանրայինի եթերում: Որպես ատելության խոսքի տարածման «հանրահայտ» պլատֆորմ առանձնացնում է նաև Ազգային ժողովի ամբիոնը:

Ատելության խոսքի տարածման ժամանակագրության վերաբերյալ կարծիքները տարբեր էին, քանի որ որոշ դեպքերում մասնագետները կարծում էին, թե ատելության խոսքի նախադրյալները Հայաստանում ի հայտ են եկել 2018 թվականից.

“The Soviet Union encouraged hate speech against any other group, and this continued to be the norm even after independence. But if before it was limited by a limited resource, that is, it was one channel we more or less followed, or it was a few newspapers that had dozens of barriers (it was an editor, a proofreader, they were not allowed), now there is nothing. I’ve noticed that hate speech has more supporters than balanced speech.”

The journalists emphasized from the beginning that hate speech is actually more “demanded” in politics, and today it is everywhere, because “wherever we look is hate speech, and in this sense, we must pay attention to that circumstance.”

One of the journalists, presenting his personal experience of monitoring, says that he came to the following conclusion: the media is a de facto platform from which hate speech is spread exclusively from the lips of public figures. He notes that hate speech is mostly seen on Public TV. The podium of the National Assembly is also singled out as a “popular” platform for the spread of hate speech.

Opinions about the chronology of the spread of hate speech differed, as in some cases experts believed that the precursors of hate speech appeared in Armenia since 2018.

«...անպատժելիության զգացումը կար, կար խոսելու այդ ամբողջ բացասական էներգիան պատմելու կարիքը: Հետո այդ նույն տեխնոլոգիային դիմեցին արդեն քաղաքական մյուս ճամբարներից ու հասկացան, որ դա նորմալ է, ավելին՝ աջակցություն է վայելում հասարակության շրջանում: Բսկ արդեն պատերազմից հետո այդ դոզան վտանգավոր աստիճանի հասավ. քաղաքական գործիչները, կուսակցությունները, փորձագիտական դաշտը, հաճախ նաև լրատվամիջոցները սկսեցին կիրառել»:

Դատախազության ներկայացուցիչները համակարծիք էին: Նրանք նշում են, որ ատելության խոսքն իսկապես շատ տարածված է, մասնավորապես՝ քաղաքական խոսույթում, սակայն նպատակահարմար են համարում հարցին պատասխանել բացառապես քրեաիրավական համատեքստում.

«Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բռնության կոչեր առավել շատ հանդիպում են «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, որտեղ տեսանելի է տարածվածության բարձր աստիճան: Բայց դրանք հանդիպում են նաև քաղաքական գործիչների ելույթներում, որոնք տարածվում են նորից «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, ինչպես նաև որևէ հեռուստատեսության, լրատվական կայքի կամ ինչ-որ մեկի անձնական էջից»:

Այս համատեքստում ուշագրավ է դատախազության ներկայացուցիչների արտահայտած հետևյալ միտքը. այն, որ հանրության շրջանում տպավորություն է ստեղծվել, թե առավել հաճախ քաղաքական գործիչներն են ատելության խոսք տարածում, պարզապես պայմանավորված է նրանով, որ քաղաքական գործիչների աշխատանքը հանրայնացվում է և տեսանելի է հասարակությունը: Այլ հարաբերություններում ատելության խոսքի դրսևորումներ նույնպես առկա են, բայց դրանք այդպես լայնորեն չեն հեռարձակվում.

“...there was a feeling of impunity, there was a need to talk and tell all that negative energy. Then other political camps turned to the same technology and realized that it is normal, moreover, it enjoys support among the society. And after the war, that dose reached a dangerous level. politicians, parties, the expert field, often also the media began to apply it.”

The representatives of the RA Prosecutor’s Office were of the same opinion. They noted that hate speech is indeed very common, particularly in political speech, but they consider it appropriate to answer the question exclusively in the criminal context.

“Studies show that calls for violence are more common on the Facebook social network, where a high level of prevalence is visible. But they are also found in the speeches of politicians, which are shared again on the social network “Facebook”, as well as from any television, news website or someone’s personal page.”

In this context, the following opinion expressed by the representatives of the prosecutor’s office is noteworthy. The fact that the impression was created among the public that most often politicians spread hate speech is simply due to the fact that the work of politicians is publicized and is visible to the public. In other relationships, manifestations of hate speech are also present, but they are not so widely broadcast.

«Այստեղ կարևորն այն է, որ քաղաքական գործիչները հենց դա անում են բոլորի կողմից ուշադրություն գրավելու համար: Հարկ է նշել, որ մարդիկ հեռուստացույցով տեսնում են, որ ԱԺ-ում է շատ հաճախ հնչեցվում ատելության խոսք, հատկապես՝ իշխանություն- ընդդիմություն բանավեճերում: Բայց եթե, օրինակ, տեսնեին բանավեճերը դատախազի և պաշտպանի դատական նիստի ժամանակ, այնքան շատ որքան տեսնում են ԱԺ-ի նիստերը, ապա հակառակ կարծիք կկազմեին»:

Քաղաքական գործիչների՝ ատելության խոսքի աննախադեպ տարածման պատճառների վերաբերյալ ԶԼՄ էթիկայի դիտորդ մարմնի միասնական դիրքորոշումը հետևյալն է. իրավիճակը բոլորովին այլ կլիներ, եթե ատելության խոսք տարածող քաղաքական գործիչը «անպատիժ» չմնար: Մասնավորապես նշվում է, որ հասարակությունը (առհասարակ՝ մեդիակոնտենտ սպառողը) երկար տարիներ հանդուրժել է քաղաքական գործիչների շուրթերից հնչած ատելության խոսքը, ավելին չի տեսել, որ ատելության խոսքի համար մեկը պատասխանատվության ենթարկվի, կամ մեկի նկատմամբ գոնե հանրային վերաբերմունք ձևավորվի, եթե ոչ դատական, ապա գոնե հանրային քննադատություն հնչի: Այդ իսկ պատճառով քաղաքական գործիչների շուրթերից շարունակ ատելության խոսք է հնչում:

Դիտորդ մարմնի ներկայացուցիչները համոզված են՝ խնդիրն այնքան լուրջ է, որ ժամանակի ընթացքում հայաստանյան հասարակություն մեջ քաղաքական հայացքներով պայմանավորված ատելության խոսքի նորմավորում է տեղի ունեցել, և այսօր շատերն այն համարում են քաղաքական կոնտենտ, որն արդյունավետ է օգտագործվում հատկապես նախընտրական շրջանում որպես միմյանց քննադատելու, վարկաբեկելու, միմյանց հաշվին հեղինակություն վաստակելու միջոց:

Վերոնշյալ մտահանգումների հեղինակը ներկայացնում է իր անձնական փորձը.

“What is important here is that politicians do exactly that to attract attention from everyone. It should be noted that people see on TV that hate speech is often voiced in the National Assembly, especially in government- opposition debates. But if, for example, they saw the debates during the court session of the prosecutor and the defense attorney, as much as they see the sessions of the National Assembly, they would form an opposite opinion.”

The joint position of the media ethics watchdog regarding the reasons for the unprecedented spread of hate speech by politicians is as follows: the situation would be completely different if the politician spreading hate speech did not go “unpunished”. In particular, it is noted that the society (in general, the consumer of media content) has tolerated hate speech from the lips of politicians for many years, moreover, it has not seen that someone is held accountable for hate speech, or that at least a public attitude is formed, if not judicially, then at least public criticism should be heard. That is why hate speech is heard continuously from the lips of politicians.

The representatives of the monitoring body are convinced that the problem is so serious that, over time, hate speech due to political views has been normalized in Armenian society, and today many consider it to be political content, which is effectively used, especially during the pre-election period, to criticize, discredit, and discredit each other - a way to earn reputation at each other's expense.

The author of the above thoughts presents his personal experience.

«Մի անգամ առիթ ունեցա զրուցելու ատելության խոսք հնչեցնող թեկնածուի հետ, որը «X»⁴ հեռուստա-ընկերություն էր եկել նախընտրական քարոզաշավին մասնակցելու համար, որը «քաղաքական կուսակցության» ղեկավար էր: Ուշագրավ է, որ այդ օրերին ՁԼՄ էթիկայի դիտորդ մարմինը բազմաթիվ դիմում-բողոքներ էր ստանում, հետևվաբար ես փորձեցի հարգարժան քաղաքական գործչի հետ զրուցել, հասկանալ: Նա ասաց, որ ատելության խոսքի կիրառումը շատ նորմալ է: Ցավոք սրտի, նրանք դա համարում են ժողովրդավարության ինչ-որ նվաճում, ազատ խոսքի դրսևորում են: Հենց այստեղ է, որ մենք իսկապես բխվում ենք խոսքի ազատության, ժողովրդավարության այսպիսի կեղծ մեկնաբանությունների, որ իբրև թե տեսեք, մենք դա ասում ենք, որովհետև մեր ազատ խոսքն է կարևոր»:

Քաղաքացիների շրջանում ձևավորված համոզմունքի⁵ վերաբերյալ Դիտորդ մարմնի ներկայացուցիչները մասնավորեցված կարծիք են հնչեցնում՝ նշելով, որ ատելության խոսքն ընտրարշավների ընթացքում քաղաքական գործիչների հնչեցրած սուր խոսքերի հետ է միգուցե կապված: Մասնավորապես՝ 2021 թ. ընտրարշավի ընթացքում մարդիկ ոչ միայն տեսնում էին Նիկոլ Փաշինյանի մուրճը կամ լսում Սերժ Սարգսյանի հայեոյանքը, այլ նաև քննարկում էին այդ ամենը:

⁴Անանունության սկզբունքից ելնելով՝ տեղական հեռուստաալիքի անունը չենք հրապարակում:

⁵ Այն մասին, որ առավել հաճախ քաղաքական գործիչներն են ատելության խոսք հնչեցնում:

"Once I had the opportunity to talk with a hate speech using candidate who came to "X" 4TV Station to participate in the pre-election campaign, who was the leader of a "political party". It is noteworthy that in those days the media ethics monitoring body received many applications and complaints, therefore I tried to talk to the respected politician and understand him. He said that the use of hate speech is very normal. Unfortunately, they consider it a kind of achievement of democracy, manifestation of free speech and so on. This is where we really face such false interpretations of freedom of speech, of democracy, that you see, we are saying this because our free speech is important."

The representatives of the Monitoring Body express a private opinion regarding the belief formed among the citizens⁵, noting that the hate speech is perhaps related to the harsh words uttered by politicians during the election campaigns. In particular, during the election campaign in 2021, people not only saw Nikol Pashinyan's hammer or heard Serzh Sargsyan's swearing, but also discussed it all.

⁴Adhering to the principle of anonymity, we do not publish the name of the local TV channel.

⁵About the fact that politicians are the ones who utter hate speech most often.

«Եթե առհասարակ խոսում ենք լրատվամիջոցները ողողած ատելության խոսքի մասին, ապա դա երկրորդական խնդիր է, իսկ առաջնայինը հենց այն է, որ քաղաքական դիսկուրսում են գեներացվում ատելության խոսք, անհանդուրժողականություն: Դա պայմանավորված է նրանով, որ մեր հանրային կյանքը քաղաքական իրադարձությունների, քաղաքական մրցակցության հետ է հիմնականում կապված և, հաշվի առնելով ընդհանուր նյարդային և ագրեսիվ վիճակները, պատահական չէ, որ հենց քաղաքական խոսքում ենք առավել հաճախ հանդիպում նաև ատելության խոսք»:

“If we talk about the speech of hate that flooded the media in general, then it is a secondary problem, and the primary one is that hate speech and intolerance are generated in the political discourse. This is due to the fact that our public life is mainly connected with political events, political competition and, taking into account the general nervous and aggressive conditions, it is no coincidence that it is precisely in the political speech that we most often encounter hate speech.”

1.2. Ի՞նչ է հարկավոր անել ստեղծված իրավիճակը բարելավելու համար:

Հատկանշական է, որ այս հարցի վերաբերյալ քննարկման մասնակիցների տեսակետները խիստ տարբերվող էին և հիմնականում մասնագետները կողմնակից էին ինքնակարգավորման մեխանիզմների ներդրմանը, շարունակական կրթության և իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, որոշ մասնավոր դեպքերում՝ իրավական մեխանիզմների նախատեսմանը կամ առկա համակարգերի արդյունավետ կիրարկմանը:

Իրավաբանները համոզված են, որ արդեն իսկ գոյություն ունեցող մարմինները պետք է իրենց գործառույթներն ավելի պատշաճ կատարեն: Մասնավորապես խոսքը վերաբերում է Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովին, քանի որ ստեղծության խոսք ամենից հաճախ հնչում է պետության օրենսդիր մարմնի ամբիոնից:

Մինևույն ժամանակ, իրավաբաններն ընդգծում են, որ քաղաքական գործիչների (և ոչ միայն) կիրառած ստեղծության խոսքի դեմ մի շարք միջոցառումներ տապալվում են հենց իշխանության և ընդդիմության ապակառուցողականության պատճառով:

«Հայհոյանքի համար մի ժամանակ քրեական պատասխանատվության էին ենթարկում, որին ես կողմ էի: Բայց դա չաշխատեց, քանի որ ընդդիմության ասած ամեն մի բառ ծանր վիրավորանք դարձրին: Հարյուրավոր քրեական գործեր հարուցվեցին: Իշխանավորներին էլ դուր էր գալիս, որ իրենց «չոռ» ասողներին քրեական պատասխանատվության էին ենթարկում: Եվրոպան էլ արձագանքեց այդ գործերին, ու չաշխատեց սա: Նորից շարունակվեց հայրհայնքի տարածման պրոցեսը: Ու հենց այդ պատճառով էլ ես վատատես եմ իրավական լուծում տալու հարցում, քանի որ հնարավոր է ունենալ օրենսդրական, իրավական լուծում, բայց փչացնել»:

1.2. What needs to be done to improve the situation?

It is noteworthy that the views of the participants of the discussion on this issue were very different and mostly the specialists were in favor of introducing self-regulation mechanisms, increasing the level of continuous education and awareness, in some private cases, the provision of legal mechanisms or the effective enforcement of existing systems.

Lawyers are convinced that the already existing bodies should perform their functions more properly. In particular, it refers to the ethics committee of the National Assembly, because hate speech is most often heard from the chair of the highest legislative body of the state.

At the same time, lawyers emphasize that a number of measures against hate speech used by politicians (and not only) fail precisely because of the destructiveness of the government and the opposition.

“Once, they were prosecuted for blasphemy, which I was in favor of. But it did not work, because every word spoken by the opposition was turned into a grave insult. Hundreds of criminal cases were initiated. The authorities also liked that those who blamed them for anything were prosecuted. Europe also responded to those cases, and this did not work. The process of spreading profanity continued again. And that is why I am pessimistic about providing a legal solution, because it is possible to have a legislative, legal solution, but spoil it.”

Առաջարկված մեկ այլ մոտեցման համաձայն՝ հարցին պետք է տալ առավել խորքային լուծում՝ պետության ակտիվ միջամտությամբ հասարակական բարձր իրավագիտակցությամբ անհատներ կրթելով և նրանց իրազեկելով դեռևս մանկապարտեզային տարիքից: Նման տեսակետն ինքնին հակազդում է պատժի խստացման միջոցով ասելության խոսքի դեմ պայքարելու նախորդիվ հնչած կարծիքին:

Այս հարցի շուրջ բավական տարբերվող էին ՀՌՀ ներկայացուցիչների մոտեցումները: Մասնավորապես՝ քննարկման սկզբում հնչում է կարծիք, որ ասելության խոսքին հակազդելու համար համացանցը պետք է վերահսկելի դաշտ բերվի: Առավել մեծ աջակցություն է ստանում այն տեսակետը, որ խնդրի լուծմանը միտված առաջին քայլերից մեկը ասելության խոսքի հստակ սահմանումը պետք է լինի, որը.

«...կզժի ասելության խոսքի և խոսքի ազատության սահմանները. պետք է իմանանք, թե որն է ասելության խոսքը, դրա բնորոշումը տանք: Ասելության խոսքի ու խոսքի ազատության սահմանը պետք է հստակ լինի»:

Ըստ ՀՌՀ ներկայացուցիչների՝ ասելության խոսքի զանգվածային տարածման պատճառներից մեկն այն է, որ ասելության խոսքն առավել մեծ ծավալով է տարածվում, քան նորմալ կոնտենտը: Նման իրավիճակներում առավելապես մեղավոր է ոչ թե այն անձը, որն ասելության խոսք է կիրառում, այլ այն սուբյեկտը, որ տարածում է այն: Այս կապակցությամբ ասվել է հետևյալը.

«Այստեղ միայն ասողների մեղքը չէ. նույն այդ տարածողներն էլ են շատ մեղավոր: Ձարմանում եմ, թե ինչու է նման քաղաքական գործչի ելույթը մեծ հնչեղություն ստանում: Դրա պատճառը գուցե այն է, որ տարածողներն են շատ»:

According to another proposed approach, a deeper solution should be given to the issue, with the active intervention of the state by educating individuals with high public legal awareness and informing them from the kindergarten age. Such a view itself contradicts the previous opinion of fighting hate speech through toughening the punishment.

The approaches of the representatives of the RA Television and Radio Commission were quite different on this issue. In particular, at the beginning of the discussion, an opinion is voiced that in order to counter hate speech, the Internet should be brought under control. The view that receives the most support is that one of the first steps towards solving the problem should be a clear definition of hate speech, which:

"...will draw the boundaries of hate speech and freedom of speech. we must know what hate speech is, give its definition. The boundary between hate speech and freedom of speech should be clear."

According to RA Television and Radio Commission representatives, one of the reasons for the massive spread of hate speech is that hate speech is spread in a larger volume than normal content. In such situations, it is not the person who uses hate speech, but the entity that spreads it, that is most guilty. In this regard, the following was said:

"Here, it is not only the fault of the speakers. those same spreaders are also very guilty. I wonder why the speech of such a politician gets a lot of attention. Perhaps the reason for this is that there are a lot of spreaders."

Զարգացնելով ասելության խոսքի տարածմանը նպաստող հարթակներին պատասխանատվության ենթարկելու միտքը մասնակիցներից մեկը նշում է, որ այդ տեսակետը թեպետ իր համար ողջունելի է, սակայն, այնուամենայնիվ, որոշակի ռիսկեր է պարունակում: Օրինակ՝ անտրամաբանական կլինի արգելել ԱԺ նիստերի ուղիղ հեռարձակումը, մինչդեռ շատ դեպքերում հենց այդ ամբիոնից է տարածվում ասելության խոսք՝ ուղիղ եթերով:

Անդրադառնալով այն հարցին, թե ով պետք է ստեղծված իրավիճակի համար պատասխանատվություն կրի, լրագրողները մանրամասնորեն ներկայացնում են խնդրի լուծման տարբերակները, մարտահրավերները, ինչպես նաև հնարավորությունները:

«Ուղղակի պետք է լինի գիտակցում, որ եթե մենք հիմա չհավաքվենք ու չսահմանենք էթիկայի կանոնները, ապա մեր փոխարեն դա անելու է պետությունը, անելու է վատ ձևերով՝ սահմանափակելով մեզ: Այս ամենը շատերը չեն հասկանում, որովհետև նույն մասնագիտական դաշտի տարբեր օղակներ ասելության խոսքի թիրախ են դառնում»:

Դիտորդ մարմնի անդամները խնդրի լուծման հնարավորությունները տեսնում են քաղաքական գործիչների հետ պարբերաբար տարվող աշխատանքներում: Այս առումով արձանագրվում է, որ քաղաքական գործիչները շատ դեպքերում գիտելիքի պակաս չունեն, և «վիճելի խոսքը» հիմնականում հանդիպում է քաղաքական դիսկուրսում՝ քաղաքական ընդդիմախոսի հանդեպ առավելություն ձեռք բերելու նպատակով: Դիտորդ մարմնի համոզմամբ՝ քաղաքական պայքարի համատեքստում հնչած «սուր խոսքը» պետք է դիտարկել որպես քաղաքական խիստ խոսք կամ հռետորական խոսք, այլ ոչ թե ասելության խոսք, քանի որ այն հասցեական չէ ինչպես առանձին սոցիալական խմբերի դեմ (օրինակ՝ էթնիկ պատկանելությամբ կամ սեռական կողմնորոշմամբ

Developing the idea of holding accountable the platforms that promote the spread of hate speech, one of the participants notes that although he welcomes this point of view, but nevertheless it contains certain risks. For example, it would be illogical to ban the live broadcast of NA sessions, while in many cases hate speech is spread live from that podium.

Addressing the question of who should be responsible for the created situation, the journalistic community presents in detail the options, challenges, and opportunities for solving the problem.

“There should just be an awareness that if we don’t gather now and define the rules of ethics, then the state will do it for us, it will do it in bad ways, limiting us. Many people do not understand all this, because different circles of the same professional field become the target of hate speech.”

The members of the Monitoring body see the possibilities of solving the problem in the regular work with politicians. In this sense, it is recorded that politicians do not lack knowledge in most cases, and “controversial speech” is mainly found in political discourse in order to gain an advantage over a political opponent. According to the opinion of the monitoring body, the “sharp speech” uttered in the context of political struggle should be considered as strictly political speech or rhetorical speech, and not hate speech, because it is not directed against individual social groups (for example, due to ethnic affiliation or sexual orientation) the hate

պայմանավորված) քաղաքական գործիչների հաճախ հնչեցրած ատելության խոսքը: Որպես քաղաքական գործիչների կիրառած ատելության խոսքի դրսևորում Դիտորդ մարմնի ներկայացուցիչներից մեկն առանձնացնում է տարբեր էթնոնիմների օգտագործումը խոսույթում՝ մարդկանց վիրավորելու նպատակով.

«Հայաստանը բավական ունիկալ երկիր է ու հասարակական ընկալման մեջ «թուրքը» ատելության, վիրավորանքի խոսք է, ու եթե մեր քրեական օրենսգրքով առաջնորդվենք, ապա թուրք ասողները պետք է դատվեն: Ճիշտ քաղաքական գործիչները չպետք է օգտագործեն նման բառեր, ինչը համարժեք է քուրդ կամ եզդի ասելուն, թեև հիմնականում օգտագործում են ցույցերի ժամանակ, հատկապես ընդդիմությունն օգտագործում է այդ եզրույթը, բառը, իսկ Ազգային ժողովի ամբիոնից երևի թե չեն ասում պետական գործիչները»:

Միևնույն ժամանակ, ընդգծվում է՝ պետք է աշխատել մարդկանց հետ, որ սոցիալական ցանցում ատելության խոսք տեսնելիս ջնջեն կամ «Report» անեն, իսկ եթե քաղաքական գործիչների խոսքը տարածվում է մեդիայի միջոցով, ապա նրանց վրա ճնշում գործադրեն:

Քննարկված հարցերի լուծման պատասխանատվությունը, ըստ Դիտորդ մարմնի, կրում է ՀՀ իրավապահ համակարգը, քանի որ քաղաքական գործիչներին պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ ԶԼՄ էթիկայի դիտորդ մարմինը որևէ գործառույթ և իրավասություն չունի. պատասխանատվության ենթարկողը իրավական դաշտում իրավապահ մարմիններն են՝ դատարանը, դատախազությունը ևն:

Դիտորդ մարմնի հնչեցրած լուծման մեկ այլ մեխանիզմի համաձայն՝ քաղաքական կյանքը կարգավորելը չափազանց խրթին է և ոչ այնքան նպատակահարմար, քանի դեռ առկա է ինքնակարգավորման հնարավորություն.

speech often voiced by figures. As a manifestation of hate speech used by politicians, one of the representatives of the Observer group singles out the use of various ethnonyms in speech with the aim of insulting people.

“Armenia is quite a unique country and in public perception, “turk” is a word of hatred and insult, and if we are guided by our criminal code, then those who say “turk” should be tried. “Right politicians should not use such words, which is equivalent to saying “kurd” or “yezidi”, although they mostly use it during demonstrations, especially the opposition uses that term, the word, but the statesmen probably don’t say it from the podium of the National Assembly.”

At the same time, it is emphasized that it is necessary to work with people so that when they see hate speech on social networks, they delete or “Report” it, and if the speech of politicians is spread through the media, then pressure is put on them.

According to the Monitoring Body, the RA law enforcement system is responsible for solving the discussed issues, as the media ethics monitoring body does not have any function or authority in relation to holding politicians accountable. the law-enforcement bodies in the legal field are responsible: the court, the prosecutor’s office, etc.

According to another solution mechanism voiced by the watchdog, regulating political life is too difficult and not very advisable as long as there is a possibility of self-regulation:

«...առաջին քայլը կլինի երատելության խոսքի նազր եսիվության նվազեցումը խորհրդարանում: Անհրաժեշտ է շատ ինտենսիվ և արդյունավետ գործի էթիկայի հանձնաժողովը խորհրդարանում, որը վերջին տարիներին ոչ մի անգամ չի հավաքվել խորհրդարանում և որևէ առիթով քննարկում չի կազմակերպել, իրականացրել, և ելնելով նրանից, որ չի էլ նախաձեռնվում մինչև այսօր էթիկայի հանձնաժողովի ակտիվ գործունեությունը՝ դա վկայությունն է նրա, որ միգուցե քաղաքական դաշտում հիմնական խաղացողների համար ձեռնտու է ոչ թե բովանդակային բանավեճը, այլ հենց փոխադարձ վիրավորանքները, քանի որ դա ավելի արդյունավետ միջոց են համարում քաղաքական գործունեությունում, քան կառուցողական խոսակցությունը և ծրագրերի մրցակցությունը»:

Դատախազության ներկայացուցիչները կարծում են, որ քաղաքական գործիչների հնչեցրած ատելության խոսքի տարածմանը հակազդելիս պետք է շատ զգույշ լինել, քանի որ քաղաքական խոսքը պայմանականորեն պաշտպանված է, և, միջազգային չափորոշիչների համաձայն, այն, ինչ արգելված է, որ, օրինակ, ոչ քաղաքական անձն ասի, շատ հաճախ թույլատրելի է քաղաքական գործիչին: Դատախազության ներկայացուցիչների ընդհանուր համոզմունքն այն է, որ գործող մեխանիզմները հիմնականում բավարար են քաղաքական գործիչների հնչեցրած ատելության խոսքին հակազդելու համար, ավելին՝ շատ հաճախ անհրաժեշտ չէ որևէ կերպ հակազդել այդօրինակ խոսույթին, քանի որ դա է ժողովրդավարության պահանջը:

«...քաղաքական իրադարձությունների մասին խոսքը պետք է առավելապես պաշտպանված լինի արտահայտելու ազատության իրավունքով, քանի որ քաղաքական իրադարձությունների մասին ինֆորմացիայի ազատ հոսքը անհրաժեշտ է ժողովրդավարական համակարգի կայացման համար»:

“...the first step would be to reduce hate speech and aggression in the parliament. It is necessary to have a very intensive and effective work ethics commission in the parliament, which in recent years has not once gathered in the parliament and has not organized, carried out a discussion on any occasion, and based on the fact that the active activity of the ethics commission has not been initiated until today, this is the evidence that maybe for the main players in the political field, it is not the substantive debate that is beneficial, but mutual insults, because they consider it a more effective way of political activity than constructive conversation and competition of programs.”

Representatives of the Prosecutor’s office believe that one must be very careful when countering the spread of hate speech by politicians, because political speech is conditionally protected and, according to international standards, what is forbidden for a non-politician to say, for example, is very often is permissible for a politician. The general belief of the representatives of the prosecutor's office is that the existing mechanisms are generally sufficient to counter hate speech uttered by politicians, moreover, it is often not necessary to counter such speech in any way, because that is the demand of democracy.

“...the speech about political events should be especially protected by the right to freedom of expression, because political the free flow of information about events is necessary for the establishment of a democratic system.”

Հետևաբար՝ քաղաքական խոսքը չի կարող արգելվել ու դրա համար պատասխանատվություն սահմանվել, եթե դա ասելության, անհանդուրժողականության, բռնություն հրահրող խոսք չէ, այլ վիրավորական, սադրող խոսք է»:

Անդրադառնալով ասելության խոսքին հակազդելու լավագույն միջոցներին՝ դատախազները նշում են, որ, օրինակ, հեռուստատեսությունների պարագայում (երբ դրանք քաղաքական բնույթի ասելության խոսք են տարածում) միզուցե արդյունավետ լինի վարչական վարույթը, որը նախազգուշացումներին կհաջորդի. դա կարող է հանգեցնել ընդհուպ մինչև արտոնագրի կասեցման:

Therefore, political speech cannot be banned and responsibility imposed for it, if it is not speech that incites hatred, intolerance, violence, but is offensive, provocative speech.”

Referring to the best means of countering hate speech, prosecutors note that, for example, in the case of television stations (when they spread hate speech of a political nature), administrative proceedings that follow warnings may be effective: it can even lead to the suspension of the patent.

1. 3. Ինչու է Ֆեյսբ ամենակտիվ հարթակն ասեղության խոսքի տարածման համար:

Փորձագիտական խմբերն անվերապահորեն համաձայն էին հանրային կարծիքին՝ վերահաստատելով, որ Ֆեյսբուքն ասեղության խոսքի տարածման հիմնական հարթակն է: Մասնագետները նշելում են, որ նրա կարգավորումները նման հնարավորություն են ընձեռում: Որպես լուծում առաջարկում են ինքնակարգավորման միջոցը և պնդում, որ միայն մեկ առանձին վերցված գործիքակազմով անհնար է բարելավել առկա դրությունը և անհրաժեշտ են համակարգային մոտեցումներ:

Իրավաբանները պնդում են, որ պատճառը Ֆեյսբուքի ընձեռած հնարավորություններն են, մասնավորապես՝ հետևյալ առանձնահատկությունները.

- Ֆեյսբուքը բոլորի համար հասանելի է,
- Ֆեյսբուքում հեշտ է գաղտնի պահել սեփական անձը,
- Ֆեյսբուքում մարդիկ, որպես կանոն, պատասխանատվություն չեն կրում իրենց գրած մեկնաբանության համար:

Իրավաբան մասնակիցները կարևոր են համարում նաև այն հանգամանքը, որ Հայաստանում ասեղության խոսքը մեծապես շաղկապված է քաղաքական իրադարձությունների հետ, իսկ Ֆեյսբուքն այն հարթակն է, որտեղ տարածվում են քաղաքական դիսկուրսները, և արտացոլվում են քաղաքական գործընթացների հետևանքները:

Իրավաբան ներկայացուցիչները վիրտուալ տիրույթում ասեղության խոսքի վերարտադրման պայման են համարում նաև հայաստանյան հասարակության մեջ տիրող անորոշության հավաքական զգացողությունը: Պատասխանելով օրենքի ունեցած կարգավորիչ նշանակության վերաբերյալ հարցին՝ իրավաբանները

1.3. Why is Facebook the most active platform for spreading hate speech?

The expert groups unreservedly agreed with the public opinion, reaffirming that Facebook is the main platform for spreading hate speech. Experts note that its settings provide such an opportunity. As a solution, they propose the measure of self-regulation and claim that it is impossible to improve the current situation with only one instrument, taken separately, and systemic approaches are needed.

Lawyers claim that the reason is the opportunities provided by Facebook, in particular, the following features:

- Facebook is available to everyone.
- It's easy to keep your identity private on Facebook.
- As a rule, people on Facebook are not responsible for the comments they write.

The participant lawyers also consider the fact that hate speech in Armenia is highly connected with political events, and Facebook is the platform where political discourses are spread and the consequences of political processes are reflected.

The representatives of the legal community also consider the collective feeling of uncertainty prevailing in the Armenian society as a condition for the reproduction of hate speech in the virtual domain. Answering the question about the regulatory significance of the law,

համակարծիք են, որ օրենքը կարող է լուծել միայն հետևանքները և պատասխանատվության հարցը, իսկ դա էական բան չի փոխում:

Գնահատելով առկա իրավիճակը՝ լրագրողները, մասնագիտական փորձի ընդհանրացմամբ, պնդում են, որ անհրաժեշտ է պարզապես փակել մեկնաբանությունները յուրաքանչյուր հրապարակման համար, սակայն, մինևույն ժամանակ, նաև մտահոգություն հայտնում, որ դա էլ նյութի դիտելիության տարածման խնդիր է առաջացնում, ինչի պատճառով դա էլ նպատակահարմար չեն համարում:

«Երբեմն նույնիսկ դա հրահրվում է, որ դիտելիություն հավաքի: Շատ լրատվամիջոցներ ունեն նաև ֆեյք օգտատերեր, որոնք մտնում մեկնաբանություններում խոսակցություն են բացում, որից հետո դարձնում են նյութ ու վերնագիր դնում: «Սոցիալական ցանցը հայոյում է» ու տակը նորից ուրախություն, ոգևորություն»:

Նրանք մատնանշում են նաև կեղծ օգտատերերի համախմբերի՝ «ֆեյքերի գործարանների» ակտիվ դերակատարությունը ֆեյսբուքյան տիրույթն աստեղության խոսքով հեղեղելու գործում՝ ընդգծելով, որ այս առումով «գնդակը իրավապահների դաշտում է», և նրանք պետք է այս ուղղությամբ կանխարգելիչ միջոցառումներ անցկացնեն: Այս կապակցությամբ մասնավորապես ասվել է.

«Որոշակի անվտանգություն են զգում կեղծ էջով, մտածում են, որ հետևանք չի ունենա: Ապահովության զգացում էկրանից այն կողմ»,

«Ատելության խոսք տարածողները հիմականում կեղծ օգտատերերն են»:

Որոշ լրագրողներ առաջընթաց են տեսնում ֆեյսբուքյան տիրույթում աստեղության խոսքի հակազդման ուղղությամբ՝ նշելով.

the lawyers agree that the law can only solve the consequences and the question of responsibility, and it does not change anything essential.

Evaluating the current situation, journalists, generalizing their professional experience, claim that it is necessary to simply close comments for each publication, but at the same time, they also express concern that this also creates a problem with the spread of viewability of the material, which is why they do not consider it suitable.

"Sometimes even this is provoked to gain views. Many media outlets also have fake users who come in and open a conversation in the comments, after which they turn it into a story and put a title: "The social network is cursing" and underneath it is joy and excitement."

They also point out the active role of groups of fake users, "factories of fakes" in flooding the Facebook domain with hate speech, emphasizing that "the ball is in the court of law enforcement" in this regard, and they should conduct preventive measures in this direction. In this regard, it was specifically said:

"They feel a certain security with a fake page, they think that there will be no consequences. A sense of security beyond the screen",

"Hate speech spreaders are mostly fake users."

Some journalists see progress in the direction of countering hate speech in the Facebook domain, noting:

«...մտածում են, բայց կարծում եմ զոնե մենք լրագրողներս կամ գիտակից մարդիկ ունեն ինքնակարգավորման խնդիր:

Ի դեպ ՏԲ-ում արդեն նկատում եմ կամաց-կամաց ձևավորվող առողջ մթնոլորտը: Միգուցե հոգնել է մարդկանց մի մասը»:

Այս առումով լրագրողները կարևորում են մոդերացիան՝ որպես թվային տիրույթում ասեղության խոսքին հակազդելու անկյունաքարային գործիք: Ըստ նրանց՝ «Ազատություն» ռադիոկայանի փորձն ինքնատիպ օրինակ է. ասեղության խոսք և վիրավորանք պարունակող մեկնաբանությունների վերահսկման համար առանձին հաստիք կա:

ՀՌՀ ներկայացուցիչները խնդրի պատճառը պայմանավորում են պետության՝ «Մետա»-ի (Ֆեյսբուք) հետ համագործակցելու հաստատակամության բացակայությամբ: Նրանք կարծում են, որ Ֆեյսբուքյան տիրույթում ասեղության խոսքի տարածման դեմ պայքարի առաջամարտիկներ պետք է լինեն այն կայքերը, որոնք հարթակ են տրամադրում օգտատերերին ասեղության խոսք տարածելու համար. նրանք պետք է պարտավորություն կրեն՝ ջնջելու խախտում պարունակող մեկնաբանությունները, սահմանափակելու մեկնաբանությունն թողնելու հասանելիությունը կամ այլ կերպ հակազդելու ասեղության խոսքի ներհոսքին:

Դատախազության ներկայացուցիչները վերջին մոտեցման հարցում համակարծիք են: Նրանցից մեկը մասնավորապես նշում է.

«Նախ կայքը պետք է պատասխանատու լինի նյութի բովանդակության համար, որ չպարունակի ասեղության խոսք, և եթե օգտագործում է այդ հարթակը, ապա պետք է նաև այնպիսի մեխանիզմներ ունենա, որ իր էջի տակ մեկնաբանություններում նմանատիպ նյութեր չտարածվի»:

“...they think, but I think at least we journalists or intelligent people are in need of self-regulation.

By the way, I already notice the healthy atmosphere slowly forming in FB. Maybe some of the people are tired.”

In this regard, journalists emphasize moderation as a cornerstone tool for countering hate speech in the digital space. According to them, the experience of “Azatutyun” radio station is an original example. There is a separate post here for monitoring comments containing hate speech and insults.

The representatives of the RA Television and Radio Commission attribute the cause of the problem to the state’s lack of determination to cooperate with “Meta” (Facebook).

They believe that the pioneers in the fight against the spread of hate speech in the Facebook domain should be those sites that provide a platform for users to spread hate speech: they should have an obligation to delete offending comments, limit access to commenting, or otherwise counter the flow of hate speech.

Prosecutor’s office representatives agree on the last approach. One of the prosecutors specifically mentions:

“First of all, the site should be responsible for the content of the material, so that it does not contain hate speech, and if it uses that platform, it should also have such mechanisms that similar materials are not spread in the comments under its page.”

ԶԼՄ էթիկայի դիտորդ մարմնի ներկայացուցիչները ևս անդրադարձել են ատելության խոսքի տարածման ինտենսիվության առումով Ֆեյսբուքի ձեռք բերած «հեղինակության» պատճառներին՝ պայմանավորելով դա այն հանգամանքով, որ Ֆեյսբուքն ամենաինտենսիվ շփման միջավայրն է Հայաստանում:

Ֆեյսբուքում ատելության խոսքին հակազդմանն անդրադառնալով՝ հնարավոր լուծումներ են նշվում: Տեխնիկական հնարավոր լուծումների շարքում հիշատակվում է արգելափակումը, որն այդքան էլ արդյունավետ չէ հայալեզու տիրույթում, քանի որ բազմաթիվ են դրա շրջանցման ձևերը: ԶԼՄ դիտորդ մարմնի ներկայացուցիչներից մեկը հետևություն է անում, որ եթե խոսքը վերաբերում է սոցիալական ցանցերին, հարցը պետք է լուծվի ոչ թե Ֆեյսբուքի, այլ հանրային քաղաքականության մշակույթի զարգացմամբ:

Դիտորդ մարմինը կարևորում է ատելության խոսքի դեմ պայքարը ֆեյսբուքյան տիրույթում նաև այն առումով, որ շատ դեպքերում ատելության խոսքով ողողված բովանդակությունը միտում ունի հասարակության մեջ նորմավորվելու, մինդեռ այդ երևույթը հանրային մեծ վտանգ է այն հանրույթներում, որտեղ «ներքին կոնֆլիկտ» կա:

Դիտորդ մարմնի ներկայացուցիչները նաև ընդգծում են այն հանգամանքը, որ.

«Այսօր նույնիսկ չեզոք հոդվածների տակ առանձին բացասական արտահայտությունը կարող է ստվերել ամբողջ բովանդակությունը, որը կարող է կոնտեքստից կտրված լինել: Դա արվում է ուշադրություն հրավիրելու, շատ հավանումներ, կարդացողներ գրավելու համար: Ցանկացած լրատվամիջոց դա օգտագործելու է, հատկապես, եթե դա հրապարակային խոսք է և այստեղ լրատվամիջոցն իրեն պաշտպանված է զգում նաև իրավական տեսանկյունից, որ ինքն ընդամենը հաղորդել է այն, ինչը արդեն հրապարակային տեղի է ունեցել հանրային կյանքում»:

The representatives of the media ethics monitoring body also referred to the reasons for the “authority” gained by Facebook in terms of the intensity of the spread of hate speech, conditioning it with the fact that Facebook is the most intensive communication medium in Armenia.

As for the question of countering Facebook hate speech, possible solutions are mentioned. Blocking is mentioned among possible technical solutions, which is not very effective in the Armenian-speaking domain, because there are many ways to bypass it. One of the representatives of the media monitoring body comes to the conclusion that when it comes to social networks, the issue should be resolved not by Facebook, but by the development of public policy culture.

The monitoring body emphasizes the fight against hate speech in the Facebook domain also in the sense that in many cases the content flooded with hate speech has a tendency to become normalized in society, while this phenomenon is a great public danger in those communities where there is “internal conflict”.

The representatives of the monitoring body also supported the fact that:

“Today, even under neutral articles, a single negative phrase can overshadow the entire content, which can be taken out of context. This is done to attract attention, lots of likes, readers. Any media outlet will use it, especially if it is a public speech and here the media outlet feels protected also from a legal point of view, that it has only reported what has already happened publicly in public life.”

Իսկ որպես լուծում առաջարկում են լրատվական որակյալ սեգմենտի խթանումն ու զարգացումը, որոնք ժամանակի հետ կարող են դուրս մղել աստելություն տարածող լրատվական անորակ սեգմենտին:

Աչքի առաջ ունենալով մեդիամիջավայրի՝ վերը նկարագրված հեռանկարը՝ Դիտորդ մարմնի ներկայացուցիչներից մեկը նշում է, որ պետք է բարելավենք լրագրող պատրաստող կրթական համակարգը, մեդիագրագիտության հարցերը լուծենք, «Fact-checking»-ի (փաստերի ստուգման)⁶ կիրառման գործում շատ պատասխանատու և հետևողական լինենք:

Դիտորդ մարմնի ներկայացուցիչները կարևորում են նաև ակնկալվող արդյունքին հասնելու ուղղությամբ բոլոր միջոցների համաժամանակյա գործարկումը.

«Մի խոսքով, այդ բոլոր ինստիտուտները պետք է համալիր կերպով զարգանան, որովհետև միայն մեկ նախաձեռնությամբ հնարավոր չէ արդյունավետություն ապահովել»:

⁶Մինչև ժամանակ, հեղինակը մտահոգվում է, որ մեր իրականությունում «Fact-checking»-ն ընդդիմության և իշխանության ձեռքում երբեմն քաղաքական պայքարի գործիք է դառնում:

And as a solution, the promotion and development of the quality news segment was proposed, which can push out the low-quality and hate-spreading news segment over time.

Considering the above-described perspective of the media environment, according to the representative of the Monitoring body, we should improve the educational system that trains journalists, solve media literacy issues, be very responsible and consistent in the use of “Fact-checking”⁶.

The representatives of the Monitoring body also emphasize the simultaneous launch of all measures to achieve the expected result.

“In short, all these institutions should be developed comprehensively, because it is not possible to ensure efficiency with only one initiative.”

⁶At the same time, the author is concerned that in our reality “Fact checking” sometimes becomes a tool of political struggle in the hands of the opposition and the government.

1.4. Պատասխանատվության մեխանիզմներ՝ հեռուստատեսությունում և առցանց լրատվականներում ատելության խոսքի տարածման համար:

Այս հարցի շուրջ քննարկման ժամանակ մասնակիցների հիմնական դիտարկումները վերաբերում էին նրան, որ պատասխանատվության մեխանիզմները պետք է ամրագրված լինեն օրենսդրության մեջ, միևնույն ժամանակ, ինքնակարգավորման միջոցներ կիրարկվեն. մեկն առանց մյուսի բավարար և արդյունավետ չէ:

Իրավաբանները համակարծիք են այն մոտեցման հարցում, որ առնվազն հեռուստատեսության կամ առցանց լրատվականների պարագայում պետք է ստեղծվի հատուկ մարմին, որն ուսումնասիրություններ կատարի ատելության խոսքի և անթույլատրելի բովանդակության վերաբերյալ տվյալների ստացման շուրջ և, այդ հիմքով, համարժեք միջոցներ կձեռնարկի խնդրահարույց իրավիճակին հանգուցալուծում տալու ուղղությամբ:

Անդրադառնալով նրան, թե ովքեր պետք է պատասխանատվություն կրեն միջնորդավորված ատելության խոսքի տարածման համար, քննարկմանը մասնակցող լրագրողները գլխավորապես մեդիայի պատասխանատվության հարցն են արծարծում: Քննարկելով նաև կոնկրետ խմբագրի կամ խմբագիրների պատասխանատվության ենթարկելու հարցը՝ նրանք պնդում են, որ դա սկզբունքայնորեն անընդունելի մոտեցում է, քանի որ այս հարաբերություններում գերակշիռ է «իրավաբանական անձի պատասխանատվությունը՝ աշխատողի պատճառած վնասի համար» սկզբունքը:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ մեդիան պետք է պատասխանատվության ենթարկվի, սակայն ոչ թե օրենքի, այլ

1.4. Accountability Mechanisms for the Dissemination of Hate Speech from Television and Online Media.

As a result of the discussion on this issue, the main observations of the participants were related to the fact that the mechanisms of responsibility should be provided both in the legislation and implemented through self-regulation, one without the other is not sufficient and effective.

Lawyers agree on the approach that, at least in the case of television or online news media, a special body should be created that will conduct studies on receiving data on hate speech and impermissible content and, on that basis, will take adequate measures to resolve the problematic situation.

When it comes to who should be held responsible for the spread of mediated hate speech, the journalists participating in the discussion heavily discuss the issue of media responsibility. Also discussing the question of holding a specific editor or editors accountable, they claim that it is a fundamentally unacceptable approach, because the principle of “the responsibility of a legal entity for the damage caused by its employee” prevails in this relationship.

According to another approach, the media should be held accountable, not before the law, but by the journalistic professional community.

Journalists also reaffirmed the importance of the responsibility of online news outlets in keeping the platform created by them free from hate speech.

Under this review, it is necessary to highlight the following thoughts

լրագրողների մասնագիտական համայնքի առջև:

Լրագրողները վերահաստատում են նաև առցանց լրատվականների պատասխանատվության կարևորությունը հարթակը ատելության խոսքից զերծ պահելու հարցում: Այստեղ անհրաժեշտ է առանձնացնել նաև քննարկման ընթացքում հնչած հետևյալ մտքերն ու հարցադրումները.

- «Լավ, իսկ եթե, օրինակ, պատգամավորներից մեկը ատելության խոսք է տարածել, և դու դա չես ուզում գրել, բայց խմբագիրն ասում է, որ շատ կարևոր է, ապա ի՞նչ կարող ես անել. ստիպված գրում ես»:

- «Ես ասում եմ, որ ատելության խոսք տարածողը պետք է պատժվի, ոչ թե մեկնաբանող լրագրողը, բայց դժվարանում եմ ասել, թե ինչ պատժամիջոց պետք է լինի քրեական, թե՛ վարչական»:

- «Սկսենք այնտեղից, որ հասարակական վերահսկողություն չկա, իսկ եթե խոսում ենք պատժի մասին, ապա այն պիտի լինի վարչական»:

ՀՌՀ ներկայացուցիչները հեռուստատեսային եթերում և լրատվական առցանց կայքերում ատելության խոսքի խնդրի վերաբերյալ քննարկման շրջանակներում մասնավոր դեպքերի են ադրադառնում: Նրանք մասնավորապես նշում են, որ Հանրային հեռուստաընկերության պարագայում Ազգային ժողովի հեռարձակումներն են հիմնական պատճառը, մինչդեռ գլխավորապես ժամանցային բնույթի կոնտենտով աչքի ընկնող «Արմենիա» հեռուստաընկերություն դեպքում խնդրահարույց է բռնության տեսարաններ պարունակող և բռնությունը որպես նորմ ներկայացնող հեռուստատեսիալների ցուցադրությունը: Կրկին անդրադառնալով հարցումներից ստացված ցուցանիշներին՝ քննարկման մասնակիցները պնդում են, որ Հանրային հեռուստաընկերությունն ատելության խոսք պարունակող կոնտենտի քանակական տվյալներով որ դա կարծրատիպային ընկալումների հետևանք է,

and questions raised during the discussion.

- *Well, if, for example, one of the parliamentarians has spread hate speech and you don't want to write it, but the editor says it's very important, then what can you do, you have to write it.*

- *I say that the person spreading the hate speech should be punished, not the journalist commenting, but I have a hard time saying what kind of punishment should be, criminal or administrative.*

- *Let's start with the fact that there is no public control, and if we are talking about punishment, then it should be administrative.*

Within the framework of the discussion on the issue of hate speech on television and online news sites, the representatives of the Television and Radio Commission discussed private cases. In particular, it was noted that in the case of the Public TV Company, the National Assembly broadcasts are the main reason, whereas in the “Armenia” TV Company, which mainly stands out for its entertainment content, the showing of TV series containing scenes of violence and presenting violence as a norm is problematic. Discussing again the indicators of Armenia’s public television company as a result of surveys, the participants of the discussion claimed that it cannot be ahead of Yerkir Media and Channel 5 in terms of quantitative data of content containing hate speech and that in the case of Public Television, it may be the result of stereotypical perceptions, as it is often criticized based on political speculation and often that is what

քանի որ Հանրային հաճախ քննադատում են՝ քաղաքական շահարկումներից ելնելով: Մասնակիցներն ընդգծում են նաև այն, որ Հանրայինի եթերում առկա են գլխավորապես սուր բանավեճեր ու քննադատություններ և ոչ երբեք քաղաքական բնույթի ատելության խոսքի համակարգային գեներացիա:

Պատասխանատվության սուբյեկտային կազմի վերաբերյալ խնդիրը քննարկելիս մասնակիցներն առաջ են քաշում երկսուբյեկտ պատասխանատվության մոդելը: Նրանցից մեկը նշում է հետևյալը.

«Իսկ ինչ վերաբերում է կարգավորմանը և պատասխանատվությանը, ապա կարծում եմ, որ պատասխանատվության պետք է ենթարկվի ինչպես ստեղծողը, այնպես էլ տարածողը»:

Ըստ մասնակիցների՝ տարածողն ավելի խիստ պատասխանատվության պետք է ենթարկվի, քանի որ հենց նա է գլխավոր պատասխանատուն. ատելության խոսքի համար նպաստավոր պայմաններ է ստեղծում և, որպես կանոն, գործում է հատուկ դիտավորությամբ:

Այս հարցի շուրջ դատախազության ներկայացուցիչները նշում են հետևյալը.

«Բնականաբար չենք կարող կատարողին թողնել ու անցնել հաջորդ քայլին. առաջին հերթին նրան է պետք անդրադառնալ՝ ատելության խոսք հնչեցնողին»:

Տարածելու մասով պետք է ասել, որ այն դիտավորություն է պահանջում, այսինքն՝ գիտակցված է բռնության կոչ տարածվում»:

people remember and use rather than their personal impressions. It was also emphasized that there is a lot of sharp debate, sharp criticism and never a systematic generation of hate speech of a political nature in Public. Regarding the question of the subject composition of responsibility, the two-subject model of responsibility was put forward.

One of the discussion participants on the above-mentioned question mentioned that:

“As for regulation and responsibility, I think that both the creator and the distributor should be held accountable.”

The idea that the spreader should be held more accountable was also promoted, because the latter is directly responsible for creating favorable conditions for hate speech and, as a rule, acts with special intent.

The representatives of the prosecutor's office mentioned the following about this issue.

“Naturally, we cannot leave the perpetrator and move on to the next step, first of all, we need to address him, the one who utters hate speech.”

As for spreading it, it must be said that it requires intent, that is, a conscious call to violence is spread.”

Առաջ քաշված հարցի վերաբերյալ Դիտորդ մարմնի անդամները ևս խորքային վերլուծություններ են ներկայացնում: Նրանք նշում են, որ եթե խոսքը Հանրային հեռուստատեսության մասին է, ապա մարդիկ իրենց հիմնական պահանջներն արդարացիորեն կապում են հենց նրա հետ, այլ կերպ ասած՝ այն, ինչի համար մասնավոր հեռուստաընկերություններին կներեն, չեն ներում Հանրայինին. մեր հասարակության գոնե մի մասը շատ լավ հասկանում է, որ այդ հեռուստատեսությունը, ի տարբերություն մյուսների, իրենց գումարներով՝ իրենց վճարած հարկերով է գոյատևում: Իսկ թե ինչու են Հանրայինին հաջորդում առավել ակտիվ ընդդիմադիր լրատվամիջոցները, դա նույնպես հասկանալի է. քանի որ հենց դրանք են հիմնականում արտացոլում էթիկական նորմերի սահմաններից դուրս գտնվող քաղաքական դիսկուրսը, և հենց այստեղ են նկատվում աստելության խոսքի, անհանդուրժողականության ննի հետ կապված հիմնական խնդիրները:

Դիտորդ մարմնի անդամները, խոսելով պատասխանատվության ձևերի մասին, նշում են, որ մեր օրերում դրանք արդեն գործում են, հատկապես այն լրատվամիջոցների համար, որոնք ունեն վերգետնյա հեռարձակման՝ հանրային մուլտիպլեքսի արտոնագրեր, և նրանց նկատմամբ մեր օրենսդրությամբ խիստ պատիժներ են նախատեսված: Բայց այսօր մի իրավիճակի ենք հանգել, որ վերգետնյա հեռարձակումը, մյուս ձևերի համեմատ, այլևս մեծ առավելություններ չունի և, ըստ ուսումնասիրությունների, լավագույն դեպքում բնակչության 25- 30%-ն է օգտվում հիմնականում վերգետնյա հեռարձակումից (նրանց թիվը կրճատվում է), իսկ մյուսները կաբելային ցանցերի կամ ինտերնետի միջոցով են հետևում հեռուստատեսային հաղորդումներին:

Այս ամենի ընդհանրացումից կարելի է հետևություն անել, որ օրենսդրական կարգավորումները պետք է լինեն տեխնոլոգիապես չեզոք, ինչը նշանակում է, որ բոլոր հեռարձակողները նույն պա-

The members of the monitoring body also presented in-depth analyzes on the raised issue. It was mentioned that if we are talking about Public TV, then rightfully people form the main demands against it, that is, what they can forgive to private TV companies, they don't forgive Public TV, because at least a part of our society understands very well that that TV is with their money and survives on the taxes they pay, unlike private ones. As for why the most active oppositional media follow this, it is also understandable, because they mainly reflect the political discourse that does not take place in ethical circles at all, and that is where the main problems related to hate speech, intolerance, etc.

In terms of responsibility, it was highlighted that nowadays its forms already exist, especially for those media that have licenses for terrestrial broadcasting, public multiplex, then strict measures are provided for them by our legislation. But today we are slowly coming to a state where terrestrial broadcasting no longer has the great advantages over other forms of broadcasting and, according to studies, only 25-30% of the population uses mostly terrestrial broadcasting and the rest watch television programs via cable networks or the Internet and that percentage will decrease.

The conclusion rising as a result of generalization of all of this is that legislation should be technology-neutral, meaning that all types of

տասխանատվությանը պետք է ենթարկվեն, քանի որ լրատվամիջոցների բոլոր տեսակներից ամենամեծ լսարանը հենց նրանք ունեն։ Մասնակիցները, այնուամենայնիվ, մեխանիզմների արդյունավետությանը թերահավատությամբ են մոտենում՝ համակարծիք լինելով հետևյալ տեսակետի հարցում.

«Այն լրատվամիջոցները, որոնք լիցենզավորված են կարգավորող մարմնի կողմից, պարտավոր են դառնալ ինքնակարգավորման մաս: Այլ բան է, որ այդ դառնալը և այդ ինքնակարգավորման համապատասխան ինստիտուտը ճանաչելը նույն բանը չեն, այսինքն՝ կարող են թղթի վրա ֆիքսել, որ ունեն որևէ օմբուդսմեն, էթիկայի հանձնաժողովի վերահսկողության տակ են գտնվում, բայց իրականում այդ մեխանիզմները չաշխատեն»:

Դիտորդ մարմնի անդամներն ընդգծում են նաև, որ, իր բոլոր թերություններով հանդերձ, միակ կառույցը, որը քիչ, թե շատ գործուն է և արդյունավետ, ՋԼՄ էթիկայի դիտորդ մարմինն է, որին միացել է 71-72 լրատվամիջոց (նաև հեռարձակողներ):

ՋԼՄ էթիկայի դիտորդ մարմնի անդամները պատասխանատվության վերաբերյալ տարբեր մոտեցումներ են առաջ քաշում: Նրանք հաստատակամ են, որ պետք է լինի օրենսդրական և ինքնակարգավորման մեխանիզմների ներդաշնակություն.

«Այն հարցերը, որ կարող են լուծվել օրենքի կիրառման դեպքում, միզուցե հասանելի չեն ինքնակարգավորման համար և, առավել ևս, հակառակը: Պետք է հասկանալ, թե ինչ մակարդակի վրա է վերջանում օրենքի միջամտությունը օրենսդրական կարգավորման մակարդակով, և որտեղ է սկսվում ինքնակարգավորումը, այսինքն՝ օրենսդրա-

broadcasters should be held equally accountable, as they have the largest audiences of all media types, but there was skepticism about the effectiveness of the mechanisms, in particular, an opinion was voiced that received the support of the participants that:

"the media that are licensed by the regulatory body are obliged to become part of self-regulation. It's another thing that becoming that and recognizing the corresponding institution of self-regulation are not the same thing, that is, they can record on paper that they have an ombudsman, and are under the control of the ethics commission, but in reality these mechanisms do not work."

It was also emphasized that despite all its shortcomings, today we can say that the only structure that more or less operates and is effective is the media ethics monitoring body, which is joined by 71-72 media outlets, including broadcasters.

In response to the question about responsibility, the members of the media ethics monitoring body put forward different approaches. They are adamant about the approach that there should be harmony between legislative and self-regulatory mechanisms.

"Questions that can be solved by applying the law may not be available for self-regulation and, even more so, vice versa. It is necessary to understand at what level the intervention of the law ends in terms of legislative regulation and where self-regulation begins, that is, the intervention in the way of legislative regulation should be very limited, for example, it cannot enter the field of editorial policy, where

կան կարգավորման եղանակով միջամտությունը պետք է շատ սահմանափակ լինի, օրինակ՝ այն չի կարող մտնել խմբագրական քաղաքականության դաշտ, որտեղ անմիջապես սուբյեկտիվ մոտեցումներ և գնահատականներ են առաջանում, իսկ ինքնակարգավորումը հենց խմբագրական քաղաքականության հետ է կապված, ինչը նշանակում է, որ բովանդակության մեջ կարող է ավելի խորը մտնել, քանի որ դրանում, նույնիսկ սուբյեկտիվության որոշ տարրերի առկայության պարագայում, նրանք խոսքի ազատության սահմանափակման առումով ծանր հետևանքներ չեն ենթադրում»:

Ինչ վերաբերում է նրան, թե ատելության խոսքի տարածման համար ով պետք է պատասխանատվություն կրի, գրեթե բոլոր մասնագետները կողմ են երկսուբյեկտ պատասխանատվության ուղենիշով առաջնորդվելու տարբերակին.

«Երկուսն էլ պետք է ենթարկվեն պատասխանատվության, քանի որ եթե լրատվամիջոցը միջոցներ չձեռնարկի, ապա իհարկե պետք է պատասխանատվության ենթարկվի: Լրատվամիջոցները շատ դեպքերում իրենց դնում են անմեղի տեղ, բայց շատ լավ ուղղորդված քաղաքական գիծ են տանում, մանիլոյացիա են անում, տարածում են, ու դա իրենց ընտրությունն է, ավելին՝ գիտակցված ընտրությունն է: Հետևաբար՝ լրատվամիջոցը պիտի պատասխանատվություն կրի»:

Մասնակիցները կարծում են, որ անհրաժեշտ է միջոցներ գործարկել հեռուստատեսության կամ առցանց լրատվականի հարթակը ատելության խոսքի տարածման համար օգտագործող սուբյեկտների նկատմամբ.

subjective approaches and assessments are immediately arises, and self-regulation is related to the editorial policy itself, which means that it can go deeper into the content, because even in the case of the presence of some elements of subjectivity in it, they do not imply serious consequences in terms of limiting freedom of speech.”

As for who should be held responsible for the spread of hate speech, experts were mostly in favor of the option of being guided by the principle of two-subject responsibility:

“Both should be held accountable, because if the media does not take measures, then of course it should be held accountable. In many cases, the media behaves like is innocent, but they take a very well-directed political line, they manipulate, they spread, and this is their choice, moreover, it is a conscious choice. Therefore, the mass media should bear responsibility.”

The option of launching measures against individual subjects who use the platform of television or online news to spread hate speech was also put forward.

«Կարծում եմ՝ հավասարաչափ բոլորս պետք է պատասխանատվություն կրենք, այդ թվում՝ սպառողը: Որոշակի նյութական պատասխանատվություն պետք է կրեն նաև այն մարդիկ, որոնք հավանության նշաններ են դնում այդպիսի կոնտենտի տակ, քանի որ հենց այս մարդիկ են մեր անուղղակի, բայց շատ կարևոր թշնամիները: Այսինքն՝ հավանումների դեպքում կարող են կրել վարչական պատասխանատվություն»:

“I think equally, we should all be responsible, including the consumer, some material responsibility should also be borne by the people who put signs of approval under such content, because it is these people who are our indirect but very important enemies. In other words, in case of approval, they can bear administrative responsibility.”

1.5. Ինչպե՞ս «պատժել» ատելության խոսք տարածողներին:

Ատելության խոսք տարածող անձանց պատասխանատվության ենթարկելու եղանակների ընտրության առումով մասնագետների կարծիքը գրեթե նույնն է և վերահաստատում է այն դիրքորոշումը, որ պատասխանատվությունը պետք է լինի վարչական և ոչ քրեական, ավելին՝ այն պետք է տարբերակված լինի:

Քննարկմանը մասնակցող իրավաբանները ներգործության վարչաիրավական և քրեաիրավական եղանակներն են առաջարկում՝ վերջինիս դեպքում տուգանքը նախատեսելով որպես քրեաիրավական ներգործության միջոց (պատժի տեսակ):

Ատելության խոսք տարածողներին օրենքի առաջ պատժելու գաղափարի առնչությամբ առկա ռիսկերին ու մարտահրավերներին անդրադառնալով՝ իրավաբանները նշում են.

«Այն լրագրողները, որոնք ֆինանսավորվում են կոնկրետ քաղաքական գործչի կամ կուսակցության կողմից, ապա կարող են ամեն անգամ տուգանքը վճարել ու խախտել: Բայց եթե քրեական լինի, ամբողջ ազգին դատվածություն է սպասվում. այդպես ո՞ր կհասնենք»:

Լրագրողների մոտեցումներում գերակշռում է այն կարծիքը, որ պետությունն ատելության խոսքի, վիրավորանքի և զրպարտության հարցերում ակտիվ դերակատարություն չպետք է ունենա. քաղաքացիներին՝ իրենց պատճառված ոչ գույքային վնասը փոխհատուցելու հայցով դատարան դիմելու հնարավորություն պետք է ընձեռի միայն: Այնուամենայնիվ, ընդգծվում է այն հանգամանքը, որ եթե ընտրությունը քրեաիրավական և վարչաիրավական պատաս-

1.5. How to “punish” those who spread hate speech?

Regarding the choice of methods of responsibility for persons spreading hate speech, the opinion of experts was almost uniform and expressed the position that the responsibility should be administrative and not criminal, moreover, they noticed that it should be differentiated.

The representatives of the legal community participating in the discussion proposed the administrative and criminal methods of intervention. Regarding the latter, providing the fine as a means of penal intervention (type of punishment).

Lawyers also talked about the risks and challenges in relation to the idea of punishing those who spread hate speech before the law.

“Those journalists who are financed by a specific politician or party can pay the fine every time and violate it. But if it is criminal, then the whole nation will be sentenced, so where will we get?”

Journalists’ approaches are dominated by the opinion that the state should refrain from taking an active role in cases of hate speech, insult and defamation and limit itself to giving citizens the opportunity to apply to court for compensation for personal non-property damage caused to them. However, it was noted that if the choice is between criminal or administrative liability, then it is preferable to take the route of administrative liability.

The representatives of the RA Television and Radio Commission also support the idea of administrative responsibility instead of criminal

խանատվության միջև է, ապա նախապատվությունը պետք է տրվի վարչականին:

ՀՌՀ ներկայացուցիչները ևս նպատակահարմար են համարում վարչական պատասխանատվությունը՝ քրեաիրավականի փոխարեն: Քննարկմանը մասնակցող ՀՌՀ ներկայացուցիչները խնդիր են համարում օրենսդրական մակարդակում ատելության խոսքի հստակ և միասնական սահմանման բացակայությունը:

Դատախազները պատասխանատվության նախընտրելի եղանակ չեն առանձնացնում՝ ընդգծելով, որ, երկարաժամկետ լուծման հասնելու տեսանկյունից, միայն պատժելով, ոչնչի չենք հասնի. անհրաժեշտ է իրագեկման արշավներ և նմանատիպ այլ գործողություններ իրականացնել դեռևս մանկապարտեզային տարիքի երեխաների շրջանում:

Դիտորդ մարմնի անդամները նշում են, որ պատասխանատվության եղանակի ընտրությունը պայմանավորված պետք է լինի նաև նրանով, թե որ հարթակում է այն տարածվում: Ներկայացուցիչներից մեկն այս մտքին հավելում է հետևյալը.

«Օրինակ՝ եթե սոցիալական ցանցում է դա, ապա կարող է լինել էջը փակելը կամ հեռացնելը, իսկ եթե գործը հասնում է Դիտորդ մարմնին, ապա խորհրդատվական ձևով դա կարող է լուծվել՝ խոսելով, կրթելով ևն, որպեսզի դատարան չհասնի գործը: Իսկ եթե հասնի դատարան, ապա դա ավելի շատ պետք է լինի վարչական պատասխանատվություն, բայց ինչ-որ դեպքում՝ նաև քրեական, եթե ծանր հետևանքներ է ունեցել»:

Անդրադառնալով հանրային հաղորդակցության մշակույթում քաղաքական գործիչների ունեցած անկյունաքարային նշանակությանը՝ ՁԼՄ դիտորդ մարմնի ներկայացուցիչները նշում են, որ թեպետ շատերը կարծում են, թե լրատվամիջոցներն են փչացնում դաշտը, սակայն իրականում հակառակն է. քաղաքական

responsibility. The RA Television and Radio Commission representatives participating in the discussion regarding accountability consider the lack of a clear and unified definition of hate speech at the legislative level to be a problem.

The participants of the prosecutor-discussion did not single out the preferred method of responsibility and emphasized that in the long-term scenario, the issue will not be solved only by punishing, because awareness campaigns and other similar actions are necessary from the kindergarten age.

The members of the monitoring body noted that the choice of the method of responsibility should also depend on the platform on which it is distributed. The representative of the monitoring body added the following in this regard:

“For example, if it is on a social network, it can be to close or remove the page, and if the case reaches the monitoring body, then it can be solved in a consultative way by talking, educating and so that the case does not reach the court. And if it reaches the court, then it should be more of an administrative responsibility, but in some cases, also a criminal one, if it had serious consequences.”

Referring to the cornerstone importance of politicians in the culture of public communication, the representatives of the Media Monitoring Body considered that although many people think that the media spoils the field, in fact it is the opposite: politicians spoil the media, although there are circumstances in the media that contribute to this - dissemination of information containing obscene content.

գործիչները որակագրվում են լրատվամիջոցներին, թեև դրանք նույնպես որոշ հանգամանքների պատճառով նպաստում են այդ անպարկեշտ բովանդակությամբ տեղեկությունների տարածմանը:

ԶԼՄ դիտորդ մարմնի ներկայացուցիչներն ատելության խոսք տարածողներին պատժելու հարցում բացառում են պետության ակտիվ դերակատարությունը և պնդում, որ պաշտպանության միակ միջոցը պետք է լինի իրավունքների վերականգնման քաղաքացիաիրավական ուղին՝ ինչպես ատելության խոսքի, այնպես էլ վիրավորանքի ու զրպարտության վերաբերյալ գործերով, քանի որ այս երևույթների քրեականացումը հղի է մի շարք բացասական հետևանքներով:

The latter excludes the active role of the state in punishing those who spread hate speech and claims that the only means of protection should be the civil legal way of restoring rights both in cases related to hate speech and insult and defamation, because the criminalization of these phenomena is fraught with a number of negative consequences.

2. Որտե՞ղ է ատելության խոսքի և խոսքի ազատության սահմանագիծը:

Ատելության խոսքի և խոսքի ազատության սահմանագծի հարցի քննարկման ժամանակ գրեթե բոլոր մասնակիցները համակարծիք էին, որ այս երկու հասկացությունները չպետք է փոխալայանաՎորել և ատելության խոսքը որպես խոսքի ազատություն ներկայացնել:

Քննարկմանը մասնակցող իրավաբանների նկատած ամենամեծ ռիսկը խոսքի ազատության կարևորագույն իրավունքի հնարավոր սահմանափակումն է:

Անդրադառնալով խոսքի ազատության և ատելության խոսքի սահմանագծի թեմային՝ իրավաբանները նշում են, որ պետք է դիտարկենք ատելության խոսքի օբյեկտիվ չափանիշները և հասկանանք, թե հասարակության տրամադրության վրա ինչպես է անդրադառնում այդ խոսքը: Մասնագետները հավելում են, որ օրինաչափություններից դուրս է քաղաքացիների՝ պետական պաշտոնյաներին ուղղված խոսքը, որը կոնվենցիոնալ պաշտպանություն ունի և կարևորագույն երաշխիք է ժողովրդավարական հասարակության մեջ:

Լրագրողները խոսքի ազատության և ատելության խոսքի սահմանագծի վերաբերյալ հետևյալ կերպ են պատասխանում.

